Այս բողոքական քարոզիչներուն անիրաւ գործերին ինչ կը նմանի. գողտուկ մը օտարի մշակած աղարակին, արտին մէջ մտնալ, և հասած հունձը գարիի ըլլայ՝ և կամ ցորենի, իրեն մանգաղովը հնձել, քաղել և ժողովել, ու իրեն շտեմարանին մէջ համբարել. այս է յիրաւի առաքել անիրաւութիւն և յայտնի գողութիւն. ահա այս օրինակին պես չէ՞ մի բողոքական քարոզիչներուն վաստակիլը՝ ուրիշ ուղղափառ եկեղեցիներէն ժողովուրդ գտնալ իրենց ժողովին անդամ ընելով, իրենց ժողովարանը լեցուցանել և այլն։ Այսու հանդերձ կը զգուշանայինք Աշխարհիս քարոզիչները սրբազան առաքեալներէն՝ որ չըլլայ թէ մեկզմիկու վաստակին ու արդիւնքին մէջ մտնան, ու իրենց սեպհականելի ուրիշին արդիւնքը խրատուցանեն, ասոր համար կը դրէ Պօղոս առաքեալը Կորնթացւոց եկեղեցւոյն, որ իրեն քարոզած եկեղեցին էր. «Եւ ոչ յանգստից պարծիմք օտար վաստակօք, և կամ թէ՝ ոչ «օտար կանոնաւ՝ ի պատրաստականս ինչ պարծել»։ Ր. Կորնթ. ժ. 15—16։

Այսու համար չէր՝ որ Աւետիս Հոգեւոր ժողովրդոց սրբազան հոտը հնդեւատանեցուց և վերստանեցուց կանոնաց մէջը դրեցին համեմատ առաքելական տահմանադրութեան այսպէս։ «Մի ոք եպիսկոպոս կամ երէց «կամ սարկաւագ իշխան լեցի այսուհետեւ քաղաքի՝ ի

,, քաղաք վտանել, և եթէ յետ այր սահմանի սուրբ
,, Աւետարանիս այսպիսի ինչ դիպեսցի, կշտամբանօք ար-
,, դելոյ յանդգնութեան գործոյն, և ելանել յեկեղե-
,, ցւոյ իւրմէ դարձուցի ՚ի նոյն։ Ոչ յանդգնին ՚ի բաց
,, ելանել յեկեղեցւոց լսելոցն, մի ընկալցին յայլ ե-
,, կեղեցի, և եթէ խրատեալ ոչ դադարեսցին, պարտ է
,, հատանել զնոսա ՚ի հաղորդութենէ ,, ։ ՚ի Կանոն
Նիկիոյ տիեզերական սուրբ ժողովոյն։

Այս տեղս յիշել արժան է քաղաքական քարոզչին-
րուն զգուշանալի անհարթութիւնն, որ լրենց գործը
կամ պաշտօնը սուրբ գրոց հակառակ ըլլալը լրենք լրենց
տպած գրքովը յայտնի կ՚ընեն ու չեն զամբիկ հարկա-
նիր, մէյմը՝ որ՝ կը քարոզչին ու կը պարծենայլին թէ՝
մենք միայն պարզ Աւետարանը կ՚ընդունինք, մեկնու-
թիւն վարդապետութիւն չենք ընդունիր։ Հիմայ նորա-
հնաը վարդապետութիւններով և մեկնութիւններով
լեցուած տետրակները կը տարածեն։ շատը ձրի և շատն
ալ դիւրագին։ Այս գիրքերուն մէկուն ալ հակառակ
դրուած է, Քրիստոնէութիւն վարդապետութիւն, որ տպուած
է ՚ի Օքսֆորդ ՚ի տպարանի Կուլնէլմա Ալիֆիլտի։
Այսր մէջը սուրբ գիրքին շատ հետաքրքիր մեկնութիւն-
ներ, վարդապետութիւններ անոնցմէ մէկին թողունք,
այլ շնորհակալ ըլլանք ու գրածնին նայինք, ու մէկմ՚ալ
լրենց գրածնին լրենք չընդունելնին հասկնանք ու զգու-
շանանք և խարդախութիւնին յայտնի ըլլայ։ Նորց պա-
տասխանին կ՚ընեն այս գիրքին մէջ հարցանելով, երես 306։
,, Որո՞նք են Աւետարանիչները ,, պատասխան կուտան։
,, Չորեքն կուտին Աւետարանիչ՝ որ Քրիստոս ղրկեցուած
,, տեղւանքը Աւետարանը քարոզելու և նոր եկեղեցիներ
,, հաստատելու համար, քաղաքէ քաղաք կը պարտին ,,։
Նոյնպէս այս ձշմարտութիւնը հաստատելու համար Գործք
առաքելոցն վկայութիւն կը բերեն։ Ը։ 5—35—40
Բայց մի զարմանար սիրելի ընթերցող, յիշէ այս տեղը
Յիսուսի վերջին մերոյ առաքելոցն համար ըսած վերջը։
,, Չարն և ոչ առնեն ,, Առա։ ԻԹ։ 3։



Տեսաք քարոզչաց քրիստոնեայ առաքելութեան պաշ-
տօնին բարեհաշտ անհմանը օրինքը, ուրիշին հոգեւոր
վաստակին և արդիւնքին ձեռնամուխ չըլլալ և չը յա-
փշտակել փառասիրութեան և ագահութեան չար ոգիով։
Այսպէս յափշտակութիւն ուրիշին վաստակին և արգիւն-
քին վայրկ ոչ միայն առաքելական պաշտօն ունեցող-
ներուն, այլ և բարի քրիստոնեայներուն ալ չվայելեր,
այլ միայն մեծ և փոքր անբան կենդանիներուն դարձն է։
Ինչպէս կը գրեն բնաղինները կենդանիներուն վրայ խո-
սելով. եշամեղուն կը գինի ՚ի հեռուստ, և երբ մէջը
պարապը կը դանայ՝ խիկին կը յարձակի այն ամբիւ-
աշխատասէր մեղուներուն մեղրաբաժնին վերեմակին մէջ՝
որ անդադար վաստակօք ժողված արդիւնքնին պատրաս-
կան մեղրը կը յափշտակէ երբեմն երեսն վաստակը և ար-
դիւնքը համարելով։

Այսպէս անիրաւ յափշտակութեան կը հետեւէին Ա-
նախկային հեղձամուղ պաշտօնեայները, դպիրները և փա-
րիսեցիները, և առաջն լրենց խղճահար ժողովուրդնե-
րուն իրրեւ նախանձախնդիր Մովսիսական օրինաց երե-
ւելով՝ կը վառաւորուէին։ Քանչ եր անոնց գործը, ընդ
ծով և ընդ ցամաք պտըտիլ լրենց ժողովուրդը շատցու-
նելու համար. որով լրենց տասանորդները և նուէրք-
ները բազմապատկին, ժողովրդոց արդիւնքները ուրիշ-
ները չտանեն լրենց սեպհականելով։ Այսոնց նենգին խոր-
հրդաւորութիւնը և ագահութիւնը ծանկապէս փրկիչն մեր
Յիսուս Քրիստոս յայտնի տեսնալով՝ արհամարհելով
ըսել կուտար։ ,, Ա՛ւ ձեզ դպիրաց և փարիսեցւոց
,, կեղծաւորաց. զի չանիք ընդ ծով և ընդ ցամաք առ-
,, նել եկամուտ մի. և յորժամ լինիցի՝ առնէք զնա որդի
,, գեհենի կրկին եւս քան զձեզ ,, Մատ։ ԻԳ։ 15։

Այսպէս խորհրդաւորութիւն ընելը՝ յափշտակութեան և
նենգութեան չար հոգիով ձեռա տալը՝ ուրիշներուն բա-
րեացը ձեռնամուխ ըլլալով լրեն անպահանջ ուզելը
միշտ հակառակ է ամեն օրինքներուն, մանաւանդ քրիս-
տոնեական գրական և շնորհական օրինքներուն անդամ կը

հակառակն։ Այսը համար է ըսել՝ մեր տէր Յիսուս Քրիստոսը կը հրամայէ՝ «Ամենայն զոր ուզեսջիք կամիջիք «Թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նո«ցա զի այն իսկ են օրէնքը և մարգարէքը»։ Մտթ. է. 12։

Ամանկ ներդաշնակութիւն բնաւ չատաջ պիտի չգայ անոնցմէ՝ որոնց խղճմտանքը առջեւ բարի դաղափարները կը գանուին և բարեյաջող կարգի տէր են։ Այլ անոնք կ՚ըսուին չար մարդիկ, որոնք պղծոտ և շլոթ դաղափարներու տէր ըլլալով խղճմտանքնին թմրեցնելու կանգրպտղ ղգացմունքները կ՚ունենան, որով բարին չխորհելով՝ իրենց անձնական և ղպայական բաղձանքը կատարելու կը փութան։ Ամանկներուն համար է վհատութիւն։ «Մինչ մարդոյ հաստատեալ է՝ի կանոն «չարին՝ ի մահափորձին լքմամ»։ Ամբոնն՝ ի ստեղծմանէ անտի, զի մարդն նոր ստեղծման ժամանակը դպրոցին մէջը, միաբ տալով սահմանային չարաչար խարէութեանը՝ անոր թերադրութեանը տուաւ իր կարգը։

Ուրիշ չար դաղափարներու ղգացմունք ունեցած մարդիկ միշտ խորհրդածութեան ալ չեր կ՚ըլլայ, և անոր դործին վախճանն ալ չափութեան կը նայի։ Անկը թէ որ իրեն վրայ դուբսէն բարի և մարդկանց հաճելի անուններ ունենայ, բայց երբ կը նայինք թէ անոր վախճանը չար է, մարդկանց վնաս կուտայ, միթէ այն բարի անունը անոր յանցանքը կրնայ մի ծածկել. զոր օրինակ մարդ մը ըստ բերման բազդին և ըստ վիճակին թագաւորական անուն ունենայ, այն հանարաւոր անոր չարութեան դործը կարո՞ղ մի ծածկել, երբոր ինքը նզեռնադործ և մոլի ըլլայ։

Նայի Քրիստոսը մատնող Յուդան բարի անուն ունէր, որովհետեւ Յուդայ կը անուանէր, որ դովութիւն և խոստովանութիւն կը թարդմանի, և Յակոբ նահապետին երկոտասան զաւակներուն մէկուն անունը Յուդայ էր, ինչ օդուտ այս դեղեցիկ անունին բարի նշանակութիւնը. այս մատնիչն Յուդայ առաքելական պաշտօնին բարի վիճակին մէջն էր, որ երկոտասան առաքեալներուն մէկը կը համարուէր։ բայց իրեն մտքին մէջ ունեցած չար դաղափարը արդասաւորութեան, իրեն կամքը յօժարեցոյց մատնելու իրեն Ջնորհքի վարդապետը և տէրը խաբդասութեան և նենդութեան համբուրելու։ Ինչ անոր անունը և առաքելական համբաւը կարող և բաւական եղաւ ծածկելու անոր արծաթասիրութեամբ մոլորիլը, նենդութեան համբոյրը, մատնութեան չարութիւնը։ Այնպէս է նաև, ինչ օդուտ է բարձրադոյն անուններով պարծենալ, և ընդհակառակն պարծալի անուանն դործել։ Ինչ շահ աստուածպաշտութեան Քրիստոնեայ անուն ունենալ, և աստուածոյ հրամանին չհնազանդելով, աստուածային կամաց և օրինաց դէմ հակառակ վարուիլ։ «Ով կոչէք զիս «տէր տէր և զոր ասեմ ոչ առնէք»։ Ղուկ. Զ. 46։ «Խոտանան դիտել զԱստուած, և դործով խրեանց «ուրանան. պիղծ և անհաւանք և յամենայն դործս «բարեաց անպիտանք»։ Տիտ. Ա. 16։

Այսը համար մեր տէր Յիսուս Քրիստոսը առաքեալները այս պատուէրը ըրաւ՝ չէ թէ առաքելութեան և աւետարանական Ջնորհքս լուսոյը մարդիկներէը լուսաւորելու պաշտօնը միայն ունենան, այլ և առաքելական բարի անուններն հաստատ ըլլայ դործքերնին։ «Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, «որպէս զի տեսցեն զդործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է»։ Մտթ. Ե. 16։

Օրինակի համար խօսինք այս տեղս. քաղաքական քաղքենիները աւետարանական քարոզիչ համարինք ըստ վիճակի հաւատոյ Աստուածոյ և քարոզութիւններն։ Որով հետեւ Ջնորհքս քարոզչներուն մէկ կանոն ալ այս պիտի ըլլայ, որ միշտ ջանան պիտի ամեն մէկ ուղղափառ աղքի երկեղեցւոյն հաւատքի ժողովուրդը մէկդիկէ բաժնելու պատճառ չըլլալ, և անոնց տէրը միաբանութիւնը քակելու առիթներուն տեղը չտալ և չքրտնել անոնց քրիստոնէական հաւատով և սիրոյն միաբանութիւնով ժողովքը

Ա՛հա այս անունը մեծ պարծանաց նշան մըն է աւետա-
րանական և առաքելական քարոզիչներուն։ Այսը համան
չէը որ՝ կը պարծենար Պօղոս առաքեալը ու կը դրէը
Կորնթացւոց եկեղեցւոյն։ ,,Ո՛վ թէ առաւել եւս պար-
,,ծեցայց վասն իշխանութեան մերոյ՝ զոր ետուեր տէր ի
,,շինել և ոչ ի քակել զձեզ,,։ Բ. Կոր. ժ. 8։ ժդ. 16։

Ապա որ հոգիով և լինչ իրաւամբ բողոքական քա-
րոզիչ անուանեալները ուղղափառ քրիստոնեայ ազգերուն
մէջ մտած՝ եկեղեցիները ցրուելու և բաժանելու և իրենց
կողմը ժողվելու սնապհականելու պաշտօն մը յատկացու-
ցած են, և կը տեսնաս որ՝ անոնց համար մեծ ձախո-
ղութիւն՝ տեղ տեղ, քաղաք քաղաք, գիղ գիղ ժողո-
վարանները կը հաստատուին, և ժողովներուն անդամները կը
գրեն ազգային եկեղեցիէն բաժնուածները իրենց թիւը
գրութիւնով. կը տեսնաս որ՝ ազգէն բաժնուած և իրեն
ազգային եկեղեցին հալածող և տեցող մարդու մը
լեցուն ամպամած կուտան, որն որ իրեն աջակցին մէջ
աշխատէր, ամէն գժուարութիւն կամ հարիւր չի-
նուն ղրկուշ կը շահէր, սանք կրկնապատիկը երիքապա-
տիկը տալով՝ իրենց նման քարոզիչ կը կարգէն, որ խոր-
գախութեամբ և նենգութեամբ երթան իրենց համազգի
հաւատացեալներուն մէջը գայթակղութիւն ձգելու ջա-
նան, որպէս զի անոնք ցրուին և բաժնին իրենց ուղ-
ղափառ եկեղեցիէն։ ,,Այլ աշխարհի գայթակղութեանց.
,,հարկ է գալ գայթակղութեանց, բայց վայ մարդոյն
,,այնմիկ՝ որոյ ձեռն գայցէ գայթակղել ,,։ Մտթ. ժԸ. 7։

Նկատ. այս ամենուն վրայ խորհրդածութիւն մը ընէ,
սանոր գործը առաքելոց գործին հետ բաղդատէ, մեկզե-
մեկ հետը պիտի գտնես, ու պիտի ըսես որ՝ սանոր
գործը սուրբ Աստուածային հակառակ է։ Բայց մի զար-
մանար, որովհետեւ մեր տէր Յիսուս ըսաւ իրեն կան-
խագիտութիւնը ։ ,,Որ ոչ ժողովէ ընդ ի, ցրուէ ,,։
Մտթ. ժԲ. 30։ Ապա ինչպէս որ ,,Հարկ է գալ գայ-
,,թակղութեան, բայց վայ մարդոյն այնմիկ, որոյ ձեռն
,,գայցէ գայթակղութիւն ,,։ Ասկէ է որ գայթակղու-



թիւնը պահու պիտի ըլլայ, բայց վայ է այն մարդուն,
որուն ձեռքովը գայթակղութիւն պիտի գայ հաւատա-
ցեալներուն, ասանկ ալ չհնարիս և ուղղափառ հաւատա-
քով և սիրով և միաբանութեամբ Քրիստոսով ժողոված
եկեղեցին հալածող քակտող և ցրուող պիտի գտնուին,
բայց անոնք չանչնալու է, որ Քրիստոսի տեառն մերոյ
մտածոյն, ինչպէս որ ինքն վճռեց։ ,,Որ ոչ է ընդ ի,
,,հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ ի, ցրուէ ,,։
Ղ ։–է ։ ժԱ. 23։

Ինչպէս այս տեղս խոստահայտելը բարեմիտ ու-
սումնական ընթերցողներուն, որ այս բողոքական քարո-
զիչները տուրբ Աստուածանչն և սրբազան առաքեալներէն
չեն հեղինակութիւն Քրիստոսի եկեղեցւոյ մէջ մըտ-
նելով՝ իրենց վարդապետութիւնը քարոզելով մոռնալով
պարզամիտներուն և անտեղեակ ժողովուրդ ստանալով և
իրենց բողոքական անունը անոնց վրայ դնելով բողոքա-
կան անուանելը ոչիեց սովորեցան, որ հիմայ կը տեսնես
կը լսես անանկներուն բերնին։ Ինչ որ հարցուներես, դու
լինչ ես. բողոքական եմ, կըսէ։ Այն յիշելը այն առաքե-
լական ժողովին վճիռը, որ Անտիոք քաղաքին մէջ հաւա-
տացեալները քրիստոնեայ անուանեցին։ Գործ. ժԱ. 26։

Այն որ սրբազան Պետրոս առաքեալը կը դրէ բոլոր
քրիստոնեայ ազգերուն, ոչ հաւատացեալները, այլ որ
իրրեւ քրիստոնեայ կը չարչարուի ձեր մէջէն՝ Թող չա-
մչնայ բնաւ, հապա այս քրիստոնեայ անունովը Թող
վառաւորի Աստուած։ Ա. Պետ. Դ. 16։ Տեսար ու
քրիստոնեայ անունը մեծ անուն է. հին հաւատացեալ
Հրէաները քրիստոնեայները այս անունով կըպարծենային,
և այս անունով հոգեւոր Հրէաներուն քաջ ախոյեան
կը կանդնեին։ Գործ. Դ. 12. Ե. 40—41։ Ոչիեց
սպրիեցան այս աստուածահաճոյ անունը մոռցանել քրիս-
տոնեայներուն, և անոնց մէջէն զատելով սրբելով՝ ու-
րիշ անուն սուրբ գիրքերէն դուրս՝ Քրիստոսի եկեղե-
ցին չհանդուցած անուններուն անոնց վրայ դնել։ Ասոնցմէ

կը լսեմ մէկ տեսակ հաւատացեալներուն քերնէն, որ պարծենալով կ'ըսեն. մենք քաղքական ենք, և մեզ կողմի հաւատացեալներն ալ կը լսենք, եթէ մենք պապական ենք: Չէ՞ որ քանի այս անուններըը եղեր են, տես քրիստոնեայներուն մէջէն՝ Քրիստոսի ամբիծ անարատ տուրքերը պահասեր է. առելութիւնը, խռովութիւնը, չարութիւնը տիրեր է. ո՞վ սերմանեց այս առելութեան չարաբոյս սերմը Քրիստոսական ազգարակին մէջը, այսինքն քրիստոնէից սրտին մէջը. Չէ՞ որ քրիստոնէից վերը կոչեցեալ Ընտանի խռովութեան և խաբեպատեան չարքային ոգին հնարեց, որով այս պապականութեան և քաղքականութեան արտաքոյ տուրք դրոց նորահնար բառերը վերի բերեցան, և ապա ասոնցմով սկսեալ առ լութեան և հոգևորոյս խռովութեան սերմն ջարդին յայտնեցաւ. ըստ այնմ՝ ,, Տէր՝ ո՞չ սերմն բարի սերմանեցեր ,, յագարակին քումմէ, որդ ուստի՞ ունիցի զսերմն. և նա ,, ասէ ցնոսա, այր թշնամի սորա ,, Մտ. ԺԳ. 27.

Այս տեղ միաբան եկաւ որ մեր հաւատգիր ուսուցիչներն եկեղեցականքն մեկ քաղաքական խորհրդածութեան մը ըրած է պօղոս առաքեալին սա խօսքին վրայով, որ ընդհանրական դատաստանի օրուան և հատուցակաց յարութեան համար կը խօսի, ,, Որպէս Ադամաւն ամեն ,, նեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին ,, կենդանասցին. իւրաքանչիւր յիւրում կարգի, նախ ,, Քրիստոս, ապա Քրիստոսեանք՝ ի գալստեան նորա ,, Ա. Կոր. ԺԵ 22—23.

Թէ որ կ'ըսէ. այս Քրիստոսեանք, միաւորապէս, ազնիւ և երանաւէտ բառը պապական և քաղքական բառերուն հետ բաղդատեցէք՝ շատ բացորոշ կը գտնանք անկէ: Որովհետև Քրիստոսէն ընտրեալ սրբազան առաքեալը՝ Քրիստոսի ընտրեալը զարդարած քրիստոնէական ձշմարիտ հաւատով Քրիստոսի հետ միացած իբրեւ բարոյական անգամ ձշմարիտ և կենդանաւոր և ընդհանրական դրէ խոյն Յիսուսի Քրիստոսի ուղղութեամբ և բարեպաշտ քրիստոնեայներըը ցոյց կուտայ: Գաղ. Գ. 27—28—29:



Ուրեմն պապական և քաղքական անուններըը այս վերի բան Քրիստոսեան անուններն զօրաթիւնեներէն շատ ու շատ տարբեր և ամենեւին հեռաւոր են:

Ա՛րդ վերյիշեալ բարեմիտ երիտասարդը, թէ որ պապական և քաղքական անուանով պարծենցողներըը հնարը դանան, այս Քրիստոսեանք բառը պապականի կամ քաղքականի միացնեն, և կամ պապական և քաղքական անուններըը, և միանգամայն Քրիստոսով և Քրիստոսի անուանով պարծենցողներըը խափան ալիսի համարձակութեան, և արժանի ժամանակաւոր և յաւիտենական մահ և դատապարտութեան պիտի դառնան, ինչպէս որ տարաձայն գրուածներով, տեսրակներով և քարոզներով յայտնի ըրած են, որ ըստ ամենայնի հակառակ է աւետարանական և առաքելական ձշմարտութեան: Բաց, կարդա՛: Մտթ. Ե. 1—2: Գ Տիմ. Ժ. 2. 15: Հռոմ. Ժ. 3—4: Փիլիպ. Գ. 7—8—9:

Ընդարձակ այս Քրիստոսեանք անուանին ընորհքը բարութիւնը յայտնելու և տարածելու տեղը, մանկանացուսիւսակը մարդկանց անունը և նորահնար վարդապետութիւնը կը քարոզուի և կը տարածուի, որովհետև կը պարծենան մարդիկ՝ որը Քաղքական, և որն ալ Պապական անուններով: Ո՞ւր է ձշմարիտ քրիստոնէութեան քարոզը, որն որ առաքեալներըը կը քարոզէին: ,, Արէք ,, քարոզեցէք զևաչեանն Քրիստոս,, Ա. Կոր. Ա. 23: ,, Օ՜ի ոչ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՅիսուս Քրիստոս ,, տուս տեառն, և զմեզ ծառայս ձեր վասն Քրիստոսի,, Բ. Կոր. Գ. 5:

Ուրեմն ուղղափառ բարի քրիստոնեայն քնաւ պիտի չընդունի ոչ Քաղքական անունը՝ և ոչ Պապական անունը, այլ ազատ և ձշմարիտ անուամբ Քրիստոսի պարծենալով պիտի ըսէ: ,, Օ՜ ոչ ես եմ Պաւղոսի մեր՝ զոր ,, ունիմք՝ ի Քրիստոս Յիսուս,, Գաղ. Բ. 4: Ա՛յսինքն ազատ ենք Քրիստոսի Յիսուսի անուամբ, չենք ընդա՛ նիր, չենք ծառայեր սուրբ պիրքերին և քրիստոսական ուղղափառ եկեղեցւոյն խորհրդական աստղութեանէն

զուրս եկած նորահիմար անուններուն. վասն զի՝ «Անք
»՛ի Քրիստոս Յիսուս հաւատացաք »: Ա՛Կ. Բ. 16:
«Ա՛մանորայ պարծիլք՛ի Քրիստոս Յիսուս »: Փիլ. Գ. 3:
Բայց հիմնական և ուղղափառ քրիստոնեայն՝ աստուա-
ծային սուրբ գիրքերէն, երանելի և երջանիկ առաք-
եալներէն և եկեղեցւոյ առաքելաշաւիղ կառավարիչնե-
րէն, սուրբ գիրքը ուղիղ և ամբողջ բացատրողներէն
պիտի սորվի երբեք սուրբ հաւատքին հիմնարատութիւնը,
հասնիլ Պօղոս առաքելոյն դրածին: «Հաւատք
»ձեր մի եցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրու-
»թեամբ Աստուծոյ »: Ա՛. Կոր. Բ. 5: «Փութացարջը
»ընթիր կացուցանել զանձն քո առաջի Աստուծոյ.
»մշակ առանց ամօթոյ, և ուղիղ համառօտել զբանն
»ճշմարտութեան »: Բ. Տիմ. Բ. 15: «Ընկեցիս օրինակ
»ողջմտութեան բանիցն, զոր լինիցն լսեր հաւատովք
»և սիրով՝ որ՛ի Քրիստոս Յիսուս »: Ա՛ՏԻ. Ա. 3:
Այս հաւատոյ ճշմարտութեան գաղափարները երբ
ունենանք մեր մտոց խնայականութեանը առջեւ, Յի-
սուսի Քրիստոսի իմաստութեան անսպառ լուսովը կըլ-
լանք բարի մարդ և բարի քրիստոնեայ, և մեր կանչին
յաժառանգութիւնը կըլլայ երբեւ ծառ բարի, և այնուհե-
տեւ կը բերէ առաքելական աստուածահաճոյ պտուղները
բարի գործոց:

Պատճառն բառական հասկնալիք այս մեր խորհրդա-
ծութիւնը այն աստուածային վճռոյն վրայով, որ դըր-
ուած է՝ «Անաք մարդոյ հաստատեալ է՛ի ննջումն
»չարին՛ի մահուանէ ելոյն »: Նէ ձեռնամուխ
ըլլանք բազմանալ՝ ապաւինելով՛ի շնորհն աստուածա-
յին այն միւս բնաբանին վրայ խորհրդածելու, որն որ
ակը մեր Յիսուս Քրիստոս վճռած է՝ «Ձկը ոչ բարի,
»բայց մի Աստուած »:



Ամենայն ինքնարուն բարի միայն Աստուած
է. վասնորոյ Յիսուս վերիչն մեր ըսաւ՝ «Ձկը ոչ բարի,
»բայց մի Աստուած »: Մատ. Ժ. 16: Մարկ. Ժ. 17:
Ղուկ. Ժ. 19: Արդեօք որի՞ ըսաւ այս խօսքը Յիսուս.
այն իշխանին՝ որ գնաց մերձեցաւ իրեն՝ բովը և համոզ-
ձակեցաւ վարձելով հարցունելու թէ՝ ի՞նչ գործեմ որ
յաւիտենական կեանքը, արքայութեան փառքը ժառան-
գեմ: «Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. վարդապետ
»բարի՛ զի՞նչ գործեցից զի զկեանս յաւիտենական
»ժառանգեցից »: Այս իշխանը հրեից ազգէն էր. և
չէր հաւատացեալ եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աս-
տուծոյ բարձրելոյ և ինքնաբուն բարի Աստուած ճշմա-
րիտ՝ եակից Հօր և փառակից սուրբ Հոգւոյն. այլ միայն
կը համոզէր ուսուցիչ իբրեւ վարդապետ ոմն՛ի մարդ-
կանէ և մարգարէ, վասնորոյ ըսաւ՝ «Վարդապետ բարի »
Բայց Յիսուս ալ կամեցաւ որ՝ անոր քիչ խօսքով և
կամ այս բարի անուն բառին միջոցաւը իրեն որդի Աս-
տուծոյ ըլլալը փոքր ինչ յայտնէ, և անոր հաւատոյ
նշոյլ մը պարգեւէ, անոր համար ըսաւ՝ «Ո՛ւր ասես
»զիս բարի. չէք ոք բարի, բայց մի Աստուած »:
Այս հանառօտ խօսքին կ՛ենթադրուի որ՝ Յիսուս անոր
ընել կը կամի. ինչու՞ համոզ զիս բարի կ՛անուանես,
չըլլայ որ ինձմէ բարի գործքերս տեսնելով և կամ բարի
խօսքերս լսելով ըլլայ այդ բարի անուն տալդ ինծի,
ինչպես շատերը կ՛ընեն: «Ո՛ամենայն ինչ բարւոք գոր-
»ծեաց առ, զի նովքեա լսել տայ և համբոյց խօսիլ »:
Մարկ. Ը. 37: «Վարդապետ բարւոք առացիր »: Ղուկ.
Ը. 39: Թէ որ ինձմէ խօսքերուս ու գործքերուս նայե-
լով կ՛ըսես ինծի «Վարդապետ բարի » երբեք բարի
գործող և բարի խօսող մարդկանէրէն մէկը համարելով
զիս, ինձի կը կամիս բարձրացուցանել և փառաւորել
համբաւելով զիս վարդապետ բարի՝ ես չեմ ընդունիր

այդ հարցաւը. «Ո՞վ ասես զնա բարի»։ Ա. Չիտցիր դու ոչ իշխանդ ընչաքաղց, զի բարի մարդ մի կարող ինչ լայ միայն բարի գործելու և բարի խօսելու և բարի ըլլալու, բայց չէ ինքնաբուն եակաև բարի, որ ըլլայ ինքնաբուղնս աղբիւր բարութեան։ Ապա եթէ դու զնա բարի կոչանանես, մի՛ ձանաչեր զնա իբրեւ լոկ մեկ բարի մարդիկներէն, այլ հարկ է քեզի որ հաւատաս նմա, որ եմ Աստուած և որդի Աստուծոյ աղբիւր բարութեան, և չեմ բարեխոհ և բարեգործ մարդկինեն ոեն պէս միայն բարի մարդ, այլ եմ իսկական ինքնաբուն բարի։ Ապա եթէ առանկ ըստ ինքեան բարի եմ, ըստ որում Աստուած և որդի Աստուծոյ, պարտ է քեզ հաւատալ և ձանաչել զնա իբրեւ զԱստուած բարի և ոչ իբրեւ մարդ բարի, վասն զի. «Ոչիք ոք բարի, բայց մի Աստուած»։ Երբեմն մարդիկ չեն իբրեւ զԱստուած եակաև և ըստ ինքեան բարի, այլ Աստուծոյ բարերարը կամքն են ստեղծեալ, և նորին բարութեան հաղորդեալ, և գործոյ և բանիւ բարի երեւեալ բարի մարդիկ։

Ապաքեն ոմն բարեմիտ ընթերցող. տեսանը մի հանուռօտիւ, հանդիպել ուղեց մեր կենարար տէր Աստուած Յիսուս Քրիստոս այն իշխանը՝ որ երկիր էր վարձելով խրատ առնելու թէ՝ ի՞նչ գործով իրեն պիտի յաջողուի յաւիտենական կեանքը ժառանգելու. վասն զի բնաւ չէր ուղեր ըստաւորութիւն հաւատոյ՝ ապահովութեամբ մնչեալ ըլլալուն համար, իրեն նախ պէտք էր հաւատոյ չքմարտութիւնը ունենալ Քրիստոսի մարդեղութեանը և վերկացութեանը վրայով, և ապա անոր ուսուցանական խրատներուն գործադիր ըլլալով՝ առաքինի վարուք կատարեալ հաւատացեալ ըլլալ. ըստ որում Յիսուս ասանկ կը քարոզէր, «Ես եմ լոյս աշխարհի. որ ինձ կը հետեւի՝ չի պիտի գնայ, այլ ընկալի զլոյս կենաց»։ Յով. Ը. 12։ Եւ դարձ. «Ես եմ կաթ հաց՝ ով ամենայն որ ինձ գայ չի պիտի հաւատայ ի՛նձ, ընկալի զկեանս յաւիտենական»։ Մատ. Ժ. 40։ Բայց այս անձը որ կը հարցընէ Յիսուսի,



«Ո՞րդեպէտ բարի, զի՞նչ գործեցից զի կեանս յաւիտենական ժառանգեցից»։ Նմանը Քրիստոսական հաւատոյ չքմարտութիւնը, և խոստանալութեամբ հաւատոյ չէր ճանաչեր Յիսուս Քրիստոսը Աստուած և որդի Աստուծոյ, որ նոյն ինքն էր լուսոյ շնորհաց իւրոց առաքնորդող՝ ի մշանջենաւոր փառս երկնից որքայութեան իւրոյ և պարգեւիչ բարութեան յաւիտենական կենաց։ Ասանորայ ինքնին Յիսուս մարդասիրութեամբն հաճեցաւ զգացուցանել ամն իրեն աստուածային բարութիւնը նշոյլ մի հաւատոյ առաքել սորին մատ զգացմանը. ուստի ըստ անոր վճռաբար. «Ոչիք ոք բարի, բայց մի Աստուած»։ Բայց այս իշխանաւորը անձր առաջի մատ իւրոց ապահովութեան ընչաքրութեան չար գաղափարներ ունենալով՝ անկարող եղաւ ընդունելու այն պարզութիւնը՝ որ էր հաւատոյ լուսափայլութիւնը։ Այլ մեք գիտենք առբր հաւատոյ անպակաս լուսով, որ միայն ըստ ինքեան ինքնաբուն բարին՝ Աստուած է, որով ամենայն կարիք սանգծան և գոյացան, վասնորոյ կոչին բարիք։ Ա. Տիմ. Դ. 4։ Թէ որ բնաշնութեան արհեստիւ քննես՝ ամեն մէկ սանգծած կարիներուն մէջ կը գտնես զանազան օգտաւէտ բարի զօրութիւններ. արեգակն է լուսատուող ամենքեաց, և ամեն երկնային մարմիններ, լուսինը և աստղերը ունին պէս պէս օրինաւոր և օգտակար զօրութիւն. նոյնպէս և ամեն կենդանիները ունին մարդուն օգտակար պիտանաւորութիւն, որոնցմէ ոմանք արագընթացութեամբ կը ծառայեն մարդկան, կեաք բարեկամ և զօրացուցիչ կենդանութեան խորհրդով կ՚ըլլան. ոչ ապաքէն կարի անընդարար է լուին կովուց և կաճեն մսեաց, մեղուք անուշահամ մեղր կը պատրաստեն մեզի։ Տեսնես ծաղկին և ցամաքային կենդանիները և կամ թռչունները, ոմանք են անդադար զօրութեամբ՝ հարկաւոր՝ ի պէտս մարդկային կենդանութեան, և ոմանք ունին զօրութիւն բժշկական դեղերու հարկաւոր և օգտակար։ Օշը օրինակ կը պատմէ սուրբ գիրքը որ Տօբիթայ կուրացած աչքը

բացուեցաւ առողջացաւ Եհովայէլ հրեշտակին ազդեցութեամբը լրեն սրտբուն Տօբիային բռնած ձկանը վրէն հանած լեղիովը։ Տբ. Զ. 9. ԺԱ. 14։ Ըսաւ պետրոս կը տեսնանք որ՝ խախտած անդամից բժիշկները կատարեալ կուջած ձկան իւղովը լրեց ապրեցնել կը գործեն, որով շատ կը բժշկուին խախտած անդամք ոսկերաց, և ջղերը կը զօրանան։ Ետս կենդանիները կը տեսնանք որ մարդկան բարեկեցութեան և բարեաք կենցաղավարութեան ուսուցիչ կ՚ըլլան. ոմանք կ՚ուսուցանեն աշխարհի փորձութեան և խորամանկ մարդկային բռնութեան սրտպիտներէն զգուշանալ՝ արթուն խելքով պարկիլ և կենցաղավարիլ աշխարհի մէջ. ինչպէս այծեամն որ միշտ կը նկատէ լրեն գնացած ճանապարհը հետանոց, թէ որ կասկած մը ունենայ սրտպիտի մը նախքան կը փոխէ լրեն ընթացքը։ Այսչափ միջնորդը չէնչին կենդանի մըն է, բայց տես ծոյլ և պղերգ մարդիկներուն նախապատրաստութիւն խմաստութիւն կ՚ուսուցանէ լրեն գործքովը, ուստի պէտք է անխոնջ կ՚աշխատի առաքը կը ժողովէ կը պատրաստէ կը հանգարտ լրեն ձմեռուան կերակուրին պաշարը։ Որը Թոզուց բնական ճանապարհ զգացման մեղուց, որոնք բարի և օգտակար հրեշտ ծաղկանց ժողովելու կ՚աշխատասիրեն, և հետևալ կարգադրութեամբ այն ցանկալի մեղրը կը գործեն. առանց նման շատ պիտի դանուս օգտակար և բարի զօրութիւնը, եթէ մեծ և եթէ փոքր և չքոտի կենդանիներուն վրայ։ Ինչպես Սողոմոն իմաստունը ասանկ կենդանիներէն շատ բարոյական խրատներ քաղելով՝ և այս կենդանիները օրինակ տալով՝ կը խրատէ։ «Մի՛ տար քուն աչաց քոց, և մի՛ նիրհումն արտեւանաց քոց։ Ազատեա՛ իբրեւ զայծեամն ի յորջից և իբրեւ զհաւա յորդայից։ Երթ առ մրջիւնն ո՛վ վատ. և նախանձաց ընդ ճանապարհս նորա։ Նա՛ ընդ իմաստնա՛ գոյն եւս քան զնա։ Զի նորա ոչ գոյ երկրապետ, ճաշակ, և ոչ հարկադիր, և ոչ այն որ տագնապիչ, և ոչ ընդ տերամբ է։ Նա պատրաստէ յամա-



րայոյ ղեկերակուր, և բաղում համբարս դնէ ի հունձս։ Կամ երթ առ մեղուն և ուսիր՝ զինչպէս գործունեայ է, զգործ նորա որպէս պարկեշտութեամբ է, զորոյ զվաստակս թագաւորք և տնտեսք ի բժշկութիւն մատուցանեն, ցանկալի է, ամենեցուն և վաստակաւոր, զի թէպէտ և տկար է զօրութեամբ, սակայն իմաստութիւն և յարգեցաւ։» Ես. Զ. 4—5—6—7—8։ Թագաւոր ասել զանազան արհամարհութեան, բռնութեան, տանկերուն, և ծաղկիներուն բարի և օգտակար ներգործութեանց վրայով, որոնց համար ոչ միայն բաւականները կը նկատգրեն, այլ և Աստուածային դեղադրծները փոքռալ խոհ կը վկայեն։

Որդ այս տեղ մեքենայնիս բերինք և շատ մը խորհուրդ այս առնն բարեկներուն վրայ, որ առն մէկը մէկ տեսակ բարութեան զօրութիւն և ներգործութիւն ունին, և այս բարութիւններուն ներգործութիւնը տուած է Աստուած արարչին երկնի և երկրի երեւելեաց և անեւութից, որ և նա ինքն է ինքնաբուն միայն բարի և յաւիտենական ամենակալ բարութիւն, որուն նման ոչ գոյ այլ բարի։ «Զի՛ոք ոչ բարի բայց մի Աստուած,» ըսաւ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ։ «Տէր իմ տէր տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից տիրող հաւատարապէս, միայն արարիչ ըղնաս յոչնչից։» Գ. 1։ Ինչպէ և ի՞նչ բանի հարկաւորութեան համար այս բարի տեղծուածները յաշխէ պէտք Աստուած, և ամեն մէկուն մէկ մէկ տեսակ զօրութիւն բարութեան ընդհանուր Նա այս հարիներուն պարգեւած բարութեան ընդհանրական ներգործութիւնը կը յայտնէ տուրբ գիրքը վկայելով։ «Նա եւս Աստուած զի բարի են։» Ծն. Ա. 25։

Գիտեմ ոչ՝ ամեն տատուածպաշտները պիտի վկայեն և ամենքը պիտի խոստովանին, որ այս բարի և օգտակար և պիտանացու մարդկային կենցաղավարութեան ամեն տեղծուածները՝ Աստուած միայն մարդկան համար գոյացոյց և պատրաստեց։ Այսչ Աստուծոյ արարչագործութեան արժանի կարգը, նախ ամեն բան տեղ-

ձեց Աստուած, և այնու հետեւ կամեցաւ մարդուն տեղ-
ծանելը. «Նա ասաց Աստուած, արասցո՛ւք մարդ ըստ
»պատկերի մերում և ըստ նմանութեան. և իշխեսցեն
»ձկանց ծովու, և թռչնոց երկնից և անասնոց և ամե-
»նայն երկրի, և ամենայն սողոյ՝ որք սողին ՚ի վերայ
»երկրի»: Ծննդ. Ա. 26: Այսու յայտնի ըստաւ Աստուած,
որ այս ամենքը երկինքը և երկիր վասն անդուստ յաշխէ
գոյացեալ էակներըը մարդկային վայելչութեան և պի-
տանութեան համար կը ծառայեն, վասնորոյ ամե-
նեն վերջը արար զմարդն: Սաղ. Ը. 6—7—8:

Այժմ՝ որ բաւական ընթերցող, խորհրդածութիւնդ
բարձրացուր, խորանդ մտանէ լուսով աստուածային
շնորհաց. քանի՛ խնայիր այս ամենը Աստուած մարդուս
աշխարհիս մէջ կենցաղավարութեանը համար ստեղծեց.
իսկ մարդը ի՞նչ բանի համար և որո՞ծ ծառայելու և
պիտանացու ըլլալու համար ստեղծեց, որդեօք անբան
կենդանիներուն պէս պիտի ծնանիլ և մեռանիլ, և
միայն այս աշխարհի վայելչութիւնը, փառքը և հան-
գըստութիւնը պիտի վայելէ: Ո՛չ այդպէս է սիրելի
ընթերցող, մարդկան պատիւը և փառքը մեծ է: Սաղմ.
Ը. 6: Ա. Կոր. ԺԵ. 19: Որովհետեւ Աստուած մարդս
ստեղծեց յաւուրս երեքն անբաւ և յաւիտենական բա-
րութեանը և փառացը հաղորդ ընելու համար, վասն-
զոր շատ մեծամեծ նպատակ մարդկան վրայ ունենալը մար-
գոսիրութեամբը յայտնեց զրուցելն Աստուած: Նախ
այս խորհրդով. «Արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մե-
»րում և ըստ նմանութեան»: Ինչու մեկ ստեղծագործ-
ութիւն համար ստեղծագործութեան ժամանակը սուրբ Գր-
քոց մէջ այսպիսի խորհուրդ մը չեզած և չէ
յայտնուած, բայց միայն վասն մարդոյն:

Այդ՝ ի՞նչ պիտի նմանութիւն այս աստուածային խօս-
քերն, «Արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում և ըստ
»նմանութեան», այսպիսի փառք ու պատիւ չունեցող
հրեշտակները անդամ, վասն զի անոնց համար գրուած
չէ, որ հրեշտակները ըստ պատկերի և ըստ նմանութե-



Աստուծոյ ստեղծան. և կամ ըստ պատկերի Աստուծոյ
են, այլ միայն մարդոյն համար գրուած է: «Աստուած
»ստեղծ յերկիրէ զմարդն, և ըստ պատկերի իւրոյ արար
»զնա»: Ածոյ. Ժէ. 1: Այսու համար Դաւիթ մար-
գարէն կ՚ըսէ: «Փոքր ինչ նուազեցուցեր զարարեալսն զնա քան
»զհրեշտակս քո, փառօք և պատուով պսակեցեր զնա»:
Սաղ. Ը. 5: Ահա յայտնի կ՚երեւայ՝ Աստուած երկու
կերպ յատուկ փառօք պատուեց զմարդն իրեն անբաւ
բարութեանը և յաւիտենական փառացը հաղորդ ընելու
համար. վասնորոյ ըսաւ: «Արասցո՛ւք մարդ ըստ պատ-
»կերի մերում և ըստ նմանութեան»: Ինչպէս այս
աստուածային պատանքին և մարդասիրական խորհրդոյն
վերայ Ընծայարեան սուրբ հայրապետանիս խորհրդածելով,
սուրբ Հոգւոյն շնորհիւը այս տուն երգը կերգէ.
«Ձհանդուրժեալ բնութեանդ բարեյոյն ունել մեզի
»զանձառ բարին, այլ ստեղծեալ զմարդ յիւր պատ-
»կերին՝ ի վերոյսդին առաւօտեան և այլն»: Ի Շարակնոցէ:
Ուրեմն մարդոյս հոգեւոր բաղձանքը միշտ այս պիտի
ըլլայ, Աստուծոյ յաւիտենական բարութիւնը երկինքի
արքայութեան մէջ ժառանգելու՝ և անոր հաղորդ ըլլա-
լու, և Աստուած ալ պարգեւելու հաճութիւն ունի:
Այսու համար Պօղոս առաքեալը ազօթք կ՚ընէր առն
ժամանակ՝ որ հաւատացեալները աստուածային երկինքի
արքայութեան յաւիտենական և անձառ բարութեանը
հասնին, և Աստուծոյ մարդասիրական հաճութիւնը
կատարուի, «Աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ,
»զի զձեզ արժանիս արասցէ կոչման ձերում Աստուած
»մեր՝ մինչեւ լցուք զամենայն հաճութիւն բարութեան
»և զգործս հաւատոյն զօրութեամբ»: Ա. Թես. Ա. 11:

Երկուսդ՝ Աստուծոյ շնորհաց և պարգեւաց պատիւը
և փառքը մարդկան՝ մէկն ալ այս եղ որ սուրբ գիրքը
կը յայտնէ, «Ձի ստեղծ անդր Աստուած զմարդն հաղ
»երկութ, և վճռեաց յերեսս նորա շունչ կենդանի, և
»եղեւ մարդն հոգի կենդանի»: Ծննդ. Բ. 7: Ըսել է
որ՝ վերջալոյ նախատեսեալ մարդոյն երեսը պատրեւեց անոր

բանական անմահ հոգին, որով եղաւ մարդն զարդարուած կենդանի անմահ հոգիով։ Ղեւտ. Ի. 11։ Ա. Կոր. Ի. 45։

Ա. յս տեղս «վիշտս յերեսս» կարդալով՝ մարդկօրէն մարմնաւորապէս վիշտն պիտի չհասկնայ, այլ մանաւանդ Աստուծոյ պարգեւին ու շնորհքին Թափանցիկ հեղումը և աքանչելի ներգործումը խմանալու է, որ՝ի ներքս մարդոյն բանական և անմահ հոգին տարբրացոյց և թափանցեց, որով ստացաւ մարդն լրեն մարմնոյն մէջ զհոգի բանական և անմահ, և այս հոգւոյն պայծառ ներգործութիւնը բոլոր մարդկային մարմնոյն մէջ տարածեցաւ, և սուրբ դիրքը՝ մարդկային մարմնոյն բոլորին տեղը պատուական մասը այսինքն երեսը առնելով կը դիտէ։ «Եւ վիշտս յերեսս նորա շունչ կենդանի, և եղեւ «մարդն հոգի կենդանի»։

Բայց, բարեմիտ ընթերցասէր, ես մեկ ծիծաղելի բան մը կարդացի բողոքական քարոզչներուն գործ և նորին սրբագրուած վերատիչաղ «Բիբլիոտեկեան վարպետութիւն» կոչուած գիրքին մէջ, որուն մէջ հարց պատասխանիկ ձեւով սուրբ դիրքին շատ հետու և անհամեմատ այս անհեթեթ և անճառելի դրութիւնը ըրած են։ «Հարց. «Երբոր Ադամ և Եւան ստեղծուեցան, չափահաս «մարդիկ էին, պատասխան. Այո կատարեալ մարդիկ «էին։ Հ. Տիրը անոնց բանական ու անմահ հոգի տուաւ։ «Պ. Հրամայես։ Եւ Աստուած ստեղծեց մարդը երկրի «հողէն, ու անոր քթին ծակերուն փչեց շունչ կենդա«նութեան, և մարդը ապրող հոգի եղաւ»։ Եւ այսպէս ուրիշ աշխարհաստ տպուած Աստուածաշունչ գիրքերնուն մէջ ալ դրուած։

Ա քթին ծակերուն փչելը ամբիծ սուրբ դիրքին դուրս վարդապետութիւն չընդունող բողոքական անուանեալ նորալանդ քարոզիչներուն հոգնելը նայեցէք. սուրբ դիրքին ծայրէն կիսրին նորաձեւ, այլակերպ և անասնոյ վարդապետութիւն ընելու սուրբ գրոց վրայ, սուրբ դիրքին սրբութիւնը այլայլելու եղեր են, սուրբ դիրքը երես կ՚ըսէ. «փչեաց յերեսս նորա»։



Երեսին վրայ քիթ սեռնալով անդային վարդապետութիւն ըսեր են։ Ա՛ր մեզ ասոնց մեծախոսութիւնը, որով կը պարծենան ասանկ պարզամիտներուն մէջը եթէ մենք սուրբ դիրքերով և սուրբ հոգիով կը խօսինք։ Սուրբ դիրքին մէջը բնաւ չենք տեսնար որ Աստուած մարդուն քթին ծակերուն փչելով՝ արժանաւոր մարդ կանչ շնորհք մը պարգեւած ըլլայ. բայց կը կարդանք, որ Աստուած կը հրամայէ երբեմն լրեն ժողովրդեան որ Աստուած քու, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց, բաց զերեսան քո և լծից զքո»։ Ասղ. Զ. 10։ Եւ Գաւթի մարգարէն Աստուծոյ շնորհաց հոգին լրեն առանալը խոստովանելով կ՚ըսէ. «Ո՛չ երես իմ բացվ և առ ինձ հոգի»։ Ասղ. ՃԻԱ. 131։ Թագ մեկմ՚ալ Եսայիին մարգարէութիւնը կարդային, տեսնային Աստուծմէ խրկուած այն հրեշտակը որ Աստուծոյ սրբութիւնը կայծակի նմանութիւնով կը հաղորդեր Եսայի մարգարէին. մի թէ այն կայծակը քթին ծակերուն տարաւ, նէթէ բերանին, նայէ՛ նչ կ՚ըսէ մարգարէն։ «Ա՛ր ձեռացոյց՝ի բերան իմ, և ասէ. «ահաւադիկ մերձեցաւ այդ՝ի շրթունս քո, և հանցէ «զանօրէնութիւնս քո, և զմեղս քո սրբեացէ՝ի քէն»։ Եսայ. Զ. 7։ Թագ մեկմ՚ալ յիշեն անվեհեր համարձակութեան այն աստուածային շնորհքը, որ ամեն Տիրը պարգեւեց Երեմիա մարգարէին, բայց ոչ քթին ծակէն ներգործեց, այլ զի՞նչ. ահա Թագ կարդան Աստուածաշունչը՝ ուր գրուած է։ «Եւ ձգեաց «տէր զձեռն իւր առ իս՝ և մերձեցոյց՝ի բերան իմ, «և ասէ ցիս. ահա եառ զբանս իմ՝ի բերան քո»։ Երեմ. Ա. 9։

Ո՛նչ կ՚ըսէք. կարելի է որ այս բողոքական քարոզիչները մեզի պատասխանեն. Ո՛նչ ցիս, կամ բերանը եղեր է, կամ քթին ծակերը...Ձգեալ զի՞նչ շաղակրատութիւն, պետք արդեօք չէաւ նոր պիտի ըլլայ, որ իրենց ըրած վարդապետութիւնովը

նորաշունդ ըլլալնին, և սուրբ դրքին հակառակ դրնլնին և
խօսնլնին յայտնի ըլլալ ամենուն, որոց աչք՝ի գլուխս են։

Սուրբ դրքին այս յայտնի ոամկաց անգամ դիւրա-
հասկնալի խօսքը որ կ՚այլայլեն և անյարմար բացատրե-
լով կը վարդապետեն. արդիօք սուրբ դրոց այն դժուա-
րիմաց և ծածկեալ միտքերը ի՞նչպէս ուղղնոնն պէս
և կամ ի՞նչպէս ծուռումուռ վարդապետութիւններուն
յարմարցնելով կը խօսին, կը քարոզեն և կը դրնն, և
շատ մը վնաստ եկեղեցւոյ գլխոց և հաւատոց թիւերով
կը լեցուննն։ Նայե Պետրոս առաքեալն ժամանակն ալ
սուրբ դրքին դժուարիմաց միտքերուն կամակոր և չա-
րախոհ մարդիկ այլ ընդ այլոց մեկնութիւն տալով՝
դպրութեան առիթ կ՚ըլլային պարզամիտներուն։
Ինոնց համար դրեց սրբազան հաւատացեալներուն Պո-
ղոս առաքեալն գրութեանցը մէջ տեղ տեղ դժուարիմաց
միտքերը յիշելով. ,, Օ՜ որ օրինակ և սիրելի եղբայրն
,, մեր Պօղոս ըստ շնորհիւ իմաստութեանն նորա Ա՜ս-
,, տուծոյ՝ գրեաց ձեզ, որպէս և յամենայն իսկ թուղթսն
,, խօսի վասն այսոցիկ, յորս գտանի ինչ ինչ դժուա-
,, րիմաց, զոր անուսումնոնն և յաղտղտեքն կամակորն,
,, որպէս և զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն
,, կորուստ ,, Բ. Պետ. Գ. 10։ Ինանք ի՞նչ ըսր հոգիով
սուրբ դրքին միտքերը կը կամակորեն այն ժամանակը, ահա
հիմակ ալ նոյն հոգիով՝ այլայլելք թիւրելք և կամա-
կորելք են սուրբ դրքին միտքերը, և կը շղչին քրիստոն-
եայ ազգերուն մէջ պարզամիտները դայթակղեցնելու։

Սուրբ հոգիով կը խօսինք կը գրնինք ի՞րաւն, բայց
հոգեւորը մարմնաւոր և մարդկեղէն խորհրդածութիւնով
բացայայտ ընենք ձեւացոնելով կը թիւրեն կը ծռեն
սուրբ գրքին հոգեւոր միտքերը։ Զի՞ որ սուրբ գրքէ
մեզ կը յայտնի թէ՝ հոգեւորը հոգեւորապէս պիտի
խոնարհ և ոչ մարմնաւորապէս։ Տ՛ես, Նիկոդեմոս
հրեից իշխանը երբ Յիսուսի Բրիստոսի քովը եկաւ՝
Յիսուս անոր միտքերուն խորհրդոյն վերայնն հոգե-
ւոր ծննդեան շնորհքը քարոզեց ըսելով. ,, Եթէ ոչ ոք



,, ծնոյլ վերայնն ոչ կարէ տեսանել զարքայութիւնն
,, Աստուծոյ ,, Ա՜ր Նիկոդեմոսը միտքերուն վրիպա-
բար խորհրդոյն հոգեւոր վերայնն ծնունդը, մարմնաւոր
ծնունդ մը հասկցաւ՝ անոր համար ըսաւ. ,, Ա՞ր թէ
,, մերթ ի՞նչ լեզ անգրնն յորովայն մօր իւրոյ կրկին
,, ծնանել և ծնանիլ ,, Յիսուս ալ անոր պատասխան
տուաւ. ,, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի
,, ՚ի ջրոյ և՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն
,, Աստուծոյ. Օ՚ի ծնեալն՚ի մարմնոյ մարմին է, և ծնե-
,, եալն՚ի հոգւոյ՝ հոգի է։ Դու մի զարմանար թէ
,, ասացի քեզ՝ թէ պարտ է ձեզ ծնանիլ վերայնն, Օ՚ի
,, հովիւ ուր կամի՝ ընդ է և զձայն նորա լսես, այլ ոչ
,, գիտես ուստի գայ կամ յո՞ երթայ. սոյնպէս և ամենայն
,, ծնեալն՚ի հոգւոյն ,, Յ. Գ. 3-4-5-6-7-8։ Ա՜յս
խօսքերով հանդերձ կ՚ուզէր անդ Յիսուս Բրիստոս Նի-
կոդեմոս իշխանին միտքը, որ հոգեւորը հոգեւորապէս
ակնարկ է լսանալ ու հաւատալ Աստուծոյ հոգեւոր ան-
տեսանելի շնորհքներուն, և ոչ թէ մարմնաւորապէս
հասկնալ ու քննել, մարդկային մտքի ու խելքի տակ
ձգել. էՀ՞ որ գրուած է, ,, Հոգի է Աստուած ,, Յ. Դ. 24։
Ինանկ է նէ աստուածային շնորհքները և անտեսա-
նելի խնամքները հոգեւորապէս պիտի լսանալ, որ այս
կ՚ըլլայ սուրբ Հոգիով լսանալը, խօսիլը ու քննելը։
Այս տեղս մտիկ ընենք սուրբ Հոգիով խորհրդածու-
թիւն ընող քարոզող և գրող Պօղոս առաքեալը որ կ՚ըսէ.
Աստուծոյ նեղքին կամքերը, գաղտնի հանճարեղները
և մարդասիրական խորհուրդները մարդկանցն և ոչ մեկը
կրնար գիտնալ, և կարող չէ ինքնիրեն գիտնալու, այլ
սուրբ Հոգին Աստուծոյ գիտէ և այն պիտի գիտցունէ
ամենուն, ,, Ա՞ր ոք գԱստուծոյն գիտէ, եթէ ոչ
,, Հոգին Աստուծոյ ,, Ա. Կոր. Բ. 11։ Ա՞պա սուրբ
Հոգիով խօսողը գրողը հոգեւորապէս և հաւատքով
լսանալու է աստուածային հոգեւոր խորհուրդները, և ոչ
եթէ մարդկեղէն մարմնաւորապէս լսանալով վարդապե-
տել է. հոգեւորը հոգեւորին հետ համեմատելով և

համ յարմարելով խօսելու և գրելու է։ Ահա այս է
Աշխարհի առեւտրական քարոզչութեան յայտնի նշանն,
զոր ապա՝ «Ձեւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուս-
»մանց Աշխարհաւթեամբ բանից, այլ վարդապետու թեամբ
»Հոգւոյն ըստ հոգեւորս գհոգեւորսն համեմատեալք։
»Բանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զ»Հոգւոյն Աստուծոյ,
»զի յիմարութիւն է նմա, և ոչ կարէ գիտել եթէ
»հոգեպէս քննելի»։ Ա. Կորն. Բ. 13—14։

Հիմնոյ հարցանենք այս Վրկիտանեական վարդապե-
տութիւնը գրոցին և նորին սրբազրողներուն թէ աս-
տուածաշունչն այս խօսքը «վչեաց յերեսս նորա» հո-
գեւորապէս պիտի իմանանք եթէ մարմնաւորապէս, այն
վչեալը աստուածայինն է, եթէ մարդկային։ Արդեւ
պիտի բանն, անշուշտ աստուածայինն կը և հոգեւոր և
ոչ մարմնաւոր կամ մարդկային։ Այսպէս լինելիս կը
հաւանձակիք և կամ ոչ հոգւեն ստիպուելոցք գրելու և
տպելս մարմնաւորապէս բացատրելով աստուածաշունչն
հոգեւոր խօսքը թէ՝ «Աստուած առեղծեց մարգը հողին,
»և անոր քթին ծակերուն վչեց շունչ կենդանութեան»։

Յարելիս ընթերցող, թէ որ ասոնք գրուած տես-
նային Աւետարանին մէջը. «վչեաց յերեսս նորա»։
փոխանակ գրուածին՝ «վչեաց ի նոսա և ասէ առէք
»զՀոգի սուրբ»։ Յովհ. Ի. 22։ Համեմատելով Յովհաննու
մէջ գրուածին հետ՝ անշուշտ պիտի ըսէին և գրէին եթէ
Վրկիտաս առաքեալներուն քթին ծակերուն վչեց ու
ըսաւ. «Առէք Հոգի սուրբ»։

Բայց եկէք միտք դարձնենք ուղղափառ և Աշխարհս
վարդապետութիւններուն, աստուածային Հոգեւոր շունչ-
քներուն տալուորութիւնը նայինք, ինչ բառերով կը
բացատրեն։ Ինչպէս մեր սուրբ եկեղեցւոյ պարծանք սուրբ
Գրիգոր Նարեկացին, այս աստուածային վչեանը վրա-
յով հոգեւորապէս խօսելով տպաւորեցուցանել զարդա-
րել և վայելեցուցանել կը գրէ։ «Որ ապաթեր գնս ի քո
»պատկեր պատճառել ի ձեռն վերին տպաւորութեան
»զհարկաս օժանդակելով։ Զարդարեցեր զանձն, վայե-



»լեցուցեր վեհանձն. մտաց ճոխացուցեր, խոհասիրաբ առն-
»ցուցեր, հանճարով հատուածեցեր, և ի շնչականացն
»սրոշեցեր, հոգւով խոնարհաբար խառնեցեր»։ Գր. Ե.
Ուր եթէ «Որ ի պատկեր աստուածութեանդ քո զարդ-
»արեցեր զմարդն առաջին»։ ի Շարակ։

Գիտեմ պիտի վկայութիւն բերեն այս տեղս Յով
հաննէսէն ասացածը։ «Եթէ տակաւին հոգի չիս շունչ
»իմ և հոգի աստուածեղէնն շուրջ զքեզնէ յանդուստ»
»Ոչ խօսեցան շրթունք իմ զանօրէնութիւն, և անձն
»իմ խորհեցաւ զանիրաւութիւն»։ Յոբ. ԻԶ. 3—4։

Ինչ ըսել ի՛ւ պիտի այս խօսքով հերանելին Յոբ բա-
ցայայտ է միտք բանին թէ որ տակաւին շունչս իմ վրայ է
և աստուածային Հոգին իմին ընդարձակութեան է ու անիմ
յանդուգն, այսինքն ընչացս (բերիս) մէջ ունիմ շնչա-
ռութիւն որ է նշան կենդանութեան։ Այս խօսքերով
ըսել չուզեր աստուածային Հոգին քթիս մէջն է և կամ
քթիս ծակերուն մէջը, այլ այս հերանելին ըսել ի՛ւ պիտի
թէ՝ որչափ իմ կեանքս չէ ապառուած և Աստուծոյ
Հոգին ինձմէ չէ հեռացած՝ իմին բերանս չի խօսիր անի-
րաւութիւն, և միտքս չի խորհիր անօրէնութիւն։

Այդ թէ որ սուրբ գիրքը այս խօսքը Հոգւոյն սրբոյ
շնորհին բարեմիտ ընթերցանութիւն ընդունելով քննեսի՝
պիտի գտնես ըստ Հարստահանից երբ խելամտութեան
կամ վախակերպութեան ձեւ մը դրծածուած, այսինքն
մտան փոխանակ բոլորի դնելով, կամ թէ մտնին հա-
մար լսօսելով՝ բոլորը իմանալ։ Որովհետեւ կենդանական
շնչառութիւնը քթին կը յայտնուի որ բոլոր մարմնոյն
մէջն է կենդանութիւնը. ասոնի բոլոր մարմնոյն տեղը
մտած այսինքն ունդունքը գրուելը է, ինչպէս գրուած է։
«Եւ ստեաւ առնոյն շարժուն ի վերայ երկրի, ըստ ա-
»նոց և անասնոց՝ և գազանաց, և առնոյն սողոն ի
»վերայ երկրի և առնոյն մարդ։ Եւ առնոյն որ ու-
»նէր շունչ կենդանի յանդուտն իւր, և առնոյն որ ինչ
»ել ի ցամաքի մեռաւ»։ Ծննդ. Ա. 21—22։

Ինչ կ՛ըսենք հոգեղէն մտաց ընթերցող սիրելիք, միթէ

Ա՛ստուած այն անբան կենդանիներուն բանական անմահ հոգի՛ չնորհած է. ոչ ապաքէն միայն մարդիկ այս աստուածային անմահ հոգիով զարդարուած են. բայց կենդանական և զգայական ոգիով մանաւորապէս չնչաւորներուն ու անբաններուն նմանութիւն մը ունին մարդիկ։ Ասոր համար կը գրէ սուրբ գիրքը։ «Արուա ամենայն »մարմին շարժուն՝ ի վերայ երկրի . . . և ամենայն սո»ղուն՝ ի վերայ երկրի, և ամենայն . . . որ ունէր շունչ »կենդանի յանգուցս իւր»։ Ա՛յս օրինակ է գրուածը եւս սուրբ գրքին մէջը։ «Օ՛ի իբրեւ զծուխ է շունչ »՝ի յանդուցս մեր»։ Խոսք. Բ. 3.

Գիտէք. առանձ արուեստագ անհետեւեր վարդապետութեանց Թէոդորներուն և Թարգմանող Թէոդորներուն խոհեմութեամբ Աստուածաշունչին պարզ մտքով մեզ ճառել և շահեցուցանելով վերջացնելով, կամ սակաւ մտօք ի՞նչ պատասխանի կուտան. հերետիկոսին մէջ չեզոքանալ, կամ այսպէս պատիք կ՛ըսեն։ Այս տեղ երկու զարմանալի բան կայ. մէկ մը որ այն սրբազան Թարգմանիչներուն, որոնք աշ Թէ միայն քաջ լեզուագէտ էին, այլ և Հոգւով սրբով լեցուած սիրտ և հոգի ունէին, որով Թարգմանելին սուրբ գիրքը, և ժողովներու մէջ քննուելուան անոնց Թարգմանութիւնները, և ընդունուելուան բոլոր քրիստոնեայ ազգերուն մէջ, և հիմնակալ ունին ամէն ուղղափառ քրիստոնեայ ազգ, անպակաս և անթերի ընտիր և հատուածուն տպագրութիւն։

Հիմայ այս բաղդատական քաղաքներուն միայն երանի, որ ուղղափառ քրիստոնեայներուն սուրբ Հոգւովն լեցուած սուրբ գիրքը ազատ ձեռքերնին ունին, պահեցուցեր իրենց վարդապետութեանը չարմար չեկած տեղ սրբը, ու այն պես սուրբ գիրքը ատեն։ Մի՛ ձգեր Թէ Հակառակ խորհրդածութիւն. կը տեսնուի որ չէ Թէ միայն Թարգմանող Թէոդորները ազատ ձեռքին, այլ և սուրբ գիրքին մէջին շատ բաները վերցուցած են։ Ասոր ապացոյց այս տեղ նշանակելիք քանի մը հատը միայն, որոնք պիտի տեսնուին պակաս ատոնց տպած Աստուածաշունչին. առջի



տպածներէն ատոնք պիտի գտնուին պակաս, իսկ 1853-ին տպածներուն մէջը պիտի չերեւնան։

Գիրքը Ա. Նեզուսայ, ամբողջ Թ. գլուխը պակաս։
Գիրքը Նեեմիայ, ժ. գլխոյն 10 համարը, և ԺԱ. գլխոյն 1 համարը պակաս։
Գիրքը Յոգիէլի, ԺԶ. գլուխը ամբողջ պակաս։
Գիրքը Տաբիթայ, ԺԴ. գլուխը ամբողջ պակաս։
Գիրքը Ա. Մակաբայեցւոց, ԺԶ. գլուխը ամբողջ պակաս։
Գիրքը Բ. Մակաբայեցւոց, Ե. գլուխը ամբողջ պակաս։
Գիրքը Յարեքայ, Ե. գլուխը ամբողջ պակաս։
Գիրքը Դանիէլի, Գ. գլխոյն (Օրհնութիւն երից մանկանց) 70 համարը պակաս։ Ընդ. Ա. գլուխը ամբողջ պակաս (Շուշանի վիրապութիւնը)։

Իսկ 1853-ին տպած Աստուածաշունչին պակսեցուցածները յայտնի տես։

Նեզուսայ Ա. և Գ. գիրքերը չկան։
Գիրքը Տաբիթայ չկայ։
Գիրքը Յոգիէլի չկայ։
Նեեմիայի վեց գլուխ պակաս։
Մակաբայեցւոց Ա. Բ. Գ. գիրքերն չկան։
Գիրքը Իմաստութեան չկայ։
Սիրաք չկայ։
Գիրքը Յարեքայ չկայ։
Գիրքը Դանիէլի երկու գլուխը պակաս։

Ասոնք երեւալով աւելի պակսեցուներու են ամենքը անշուշտ, մինչեւ որ բոլոր սուրբ գիրքը ազատ ձեռքին պիտի. և ապա Ալլեղեայի և Այրենի ունեցած անկրօնութեան դալարփարներն պիտի յայտնուին։ Ալ նոր ինչ օգուտ պիտի քաղեն սուրբ գիրքը ազատ ձեռքին, պակաս տալէն և իրենց ծուռ սխալ վարդապետութեանը յարմարցնելով Թարգմանելէն։ Ակն մը որ իրենց նպատակը և կամքը ասանդը դիւրաւ պիտի հասուցանէն, բայց պիտանիք, որ պատասխանը պիտի ըլլան և եղած են Հրեաստան տեառն մերոյ Ձեռնարկութեանը և աստուածային կատարը որ ըսաւ։ «Ա՛ի հաւատայք եթէ ես ի լուծանել զօրինս կամ զմար-

,, գաբէա, աչ եկիլ լուծանել, այլ ընալ: Ամէն ասեմ
,, ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք և երկիր յոտ մի, որ
,, նշանաթեց մի ի, աչ անցցի յօրինացն և՝ի մարգարէից՝
,, մինչեւ ամենայն եղիցի ,, Մտ. Ե. 17—18:

Սուրբ գիրքն քան պահպանելոյ ժամանակին և կամ կամակոր վարդապետութիւնին յառաջ տանելոյ համար քան եւիլցուն լուծանելոյ համարձակելու միջոցը՝ ընդ մի յիշել սուրբ Յօհաննէս աւետարանչին երկինքն լուծ Հրեաստանեայ պատգամը, թէ՝ ,, Ես Յիսուս առա-
,, քինի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ Եկեղեցեացդ
,, ... վկայեմ և ես՝ ամենայնի՝ որ լսէ զքանս մարգա-
,, րէութեան գրոցս այսմիկ, թէ որ յաւելցէ՝ ի սա,
,, յաւելցէ Աստուած՝ ի վերայ նորա զնօքեն հարուածան՝
,, գրեալս՝ ի գիրս յայս: Եւ եթէ որ պակասեցուցէ
,, ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ, պակասե-
,, ցուցէ և Հայրն Աստուած զբաժին նորա՝ ի ծառսն
,, կենաց՝ և՝ի քաղաքէն սրբոյ որ գրեալ է՝ի գիրս յայս ,,
Յայտ. ԻՒ. 15—18—19:

Իրենք ալ գիտնալով այս ամենը՝ կամայ ակամայ գրեր են, ինքզինքնին բարի մարդ և բարի քրիստոնեայ ձեւացնելոյ համար, նայէ՛ իրենք գրած են, ,, Սակայն քան զ
,, Աստուծոյ խօսքին վրայ քան եւիլցնող կամ անկէ քան
,, պակասցնող գոնու լինը ,, Կոռն. Հաւատոյ էջեր. 39:
Տեսաք զգուշնին իրենք չին բռներ:

Ան երկրորդ՝ սուրբ գիրքն իրենց ընտրութիւնովը ամբողջ գլխներ և այլուր մանաւանդ քանիը պակսեցնելը, մեզի յայտնի նշանակ ցոյց կուտայ իրենց հետ ըլլալին Աստուածպաշտութենէ և քրիստոնէական ողջամիտ վարդապետութենէն՝ համաձայն Պօղոս առաքելոյն բուռն մարգարէութեանը: ,, Օ այս գիտացիք,
,, եթէ յառաջս լինելոյն եկեսցեն ժամանակք չարք, ըլ
,, եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք,
,, ամբարտաւանք, հայհոյիչք, անհնազանդք ծնողաց, ան-
,, շնորհք, անսուրբք, աննեղբք, ... որ ունիցին զկերպ
,, պարտս աստուածպաշտութեան, և՝ի զօրութենէ



,, նմանի նորա ուրացեալ լիցին և խորշեսջիք՝ի նոցանէ:
,, Քանզի՝ի նոցանէ են որ մտանեն տանէ՝ի տուն և
,, գերեն զկանայս շեղջակուտակս մեղօք վարեալք՝ի
,, պէս պէս ցանկութիւնս, որ յամենայն ժամ ուսանին,
,, և երբեք՝ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին:
,, Այլ որպէս Յանէսն և Յամբրէս հակառակ կացին
,, Մովսէսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմար-
,, տութեան, մարդք ապականեալ մտօք՝ անպիտան՝ի
,, հաւատս: Այլ ոչ երբեք յառաջ դայցեն՝ի լաւ անդր,
,, քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս
,, և նոցայն եկեւ ,, Ա. Տիմ. Գ. 1-2-5-6-7-8-9:

Վերի մեկ նշանակ մը եւս ցոյց կուտայ այս բողոքական քարոզիչները, որ իրենք արդէն հաստատուած չեն քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան մէջ. որովհետեւ ատոնք ամենքը միշտ կ՚ըսեն, բողոքական ենք և մեկ կրօնից ալ հետեւող պիտի ըլլան. մեկ առաքելական վարդապետութիւն ունինք կ՚ըսեն, և ամենքը աւետարանական կը ձեւանան. բայց աւա քանի՛ բաժնուած են, և ամեն մեկը մեկմեկ տեսակ քրիստոնէական վարդապետութիւն կը քարոզեն: Որովհետեւ երբոր Լուտեր և Կալվին պապական իշխանութեանը դէմ բաւական ընելով, այսինքն բողոքելով՝ Հռոմայեցւոց եկեղեցին զատուեցան, ուրիշ բողոքականութիւնը ծագեցաւ, այնուհետեւ ատեն մեկզմեկու անհամաձայն նորանոր կարծիքական վարդապետութիւններ ընելու, և մեկզմեկէ որոշուելով՝ առանձին առանձին ժողովքներ կազմելու, և իրենց մտացածին և ըստ քմայ վարդապետութիւնը քարոզելով, մեկզմեկէ բաժնուեցան, և ամեն տեղի ժողովրդները իրենց հետեւողութեան անուամբ որոշուեցան, Լուտերի վարդապետութեանը հետեւողք՝ Լուտերականք անուանուեցան, և Կալվինի հետեւողք՝ Կալվինականք, և Հռինգլեսոի հետեւողք՝ Հռինգլեսեանք: Այսպէս բազմատեսակ վարդապետութիւններով հետեւցան մեկզմեկէ, և մինչեւ հիմայ կը բաժնուին անվերջ հերձուածողութեամբ:

Ես հիմայ իմ զատծներս ու որոշակի բաժնուած տեսած կը յայտնեմ, որոնք երեսունէն աւելի վարդապետութիւններով բաժնուած ու միկզմիկ որոշուած են անուններով. 1. Ուսեբականք. 2. Արիանականք. 3. Օնինքլեանք. 4. Նպիսկոպոսականք. 5. Նրիցեանք. 6. Սաբելեանք. 7. Յովհեռանեանք (գիջանողք). 8. Լեթէ-քիւթիհեռ (լայնականք). 9. Նաժանեանք. 10. Սկիզբեանք. 11. Նտոխիեռանք (անտարբերք). 12. Նտհեքանատանք (անկախք). 13. Սօբալեան եղբարք. 14. Ընտապաթիսթք (կրկին մկրտողք). 15. Նւոնիվերսալիսթք (ընդհանրականք). 16. փիւրիթանք (մաքրականք). 17. Նունիթեռեանք (միադաւանք). 18. Կօնգրեգեյշընալք. 19. Նրմինեսեանք. 20. Սկիմոնեանք. 21. Պրոիլեեանք. 22. Նխզիլեանք. 23. Սենթաթիսթք. 24. Քոնկրեկեյշընալիսթք. 25. Ովերզէանք. 26. Քուէքեռ կամ Ֆռեմսլեօա. 27. Շուենքֆելտեանք կամ Ֆեռընպուրգ. 28. Ընդաման. 29. Սաբեռմանդեա. 30. Նւպիքիսթ. 31. Տայիոնալիսթք. (Հետեւողք մնաց նրանց). և այլն.

Տեսար արդեօք՝ Ընձպէս մկզմիկ զանազան և նոր բաներ օտարաճաշի վարդապետութիւններով բաժնուած ըլլալով՝ յայտնի կ'ընեն, որ առաքելական անմիաբանութեան հակառակ են, որ մերժող են Պօղոս առաքելոյն խրատը, որ Քհուսի Քրիստոսի եկեղեցին անուանելով կը յորդորէ ամեն քրիստոնեայներըզ, որ քանի չըննենան անմիաբանութիւն և տարաձայնութիւն վարդապետութեան քրիստոնէական հաւատոյ մէջ, ,,Ընձայեմ զձեզ եղբարք անուամբ տեառն մերոյ Յհսուսի Քրիստոսի, զի ընայն բան ունիցիք ամենեքեան, ,,և մի իցեն ի ձեզ հերձուածք, քանզի եկեք հաստատեալք ի նոյն միտս, և ի նոյն հանճար,,: Ա. Կորնթ. Ա. 10: Դարձեալ սոյն առաքեալը կը խրատէ մեզի այսպիսի օտար վարդապետութիւններէ հեռի մնալ, ոչ կարելի և ոչ միտք տալու յօժարիլ, քանզի որպէս օտարաձայն ու բաղմաեռակ են և չունին հիմնական աստուածաբանութիւն, անոր համար կը գրէ: ,,Յուսամ[ն]ս պէսպէս



,,և յօտարաձայնս մի դանդաղէք,,: Եբր. ժ. 9.

Յիշենք այս տեղ Ալեքսանդր Պատրոն Իսալոյին մասնաւորապէս այն յօդուածը, որուն մէջ նորադարձին հաւատոյ իրաւմէ ունեցած տարբերութիւնները կը հատուցանէ: Ընկեղեցին կ'ըսէ, պէտք է մէկ ըլլալ, բայց նորադարձութիւնը չէ թէ միայն բաժնուած է, հապա ամեն մէկ բաժանմունքներուն մէջ բաղմապատիկ տարիներ կը պարտադնակ է: Ըստքէն Ընդհանրական ընտանեկեղեցին Առաքելականն մնաց մի չանչ. Առաքելականն ալ Առելինականն բոլորովին անկախ է. նմանապէս ուրիշ ամեն աղանդները հատարակօրէն իրարու նմանձայն են, և մէկզմիկ բոլորովին զատուած: Ըստ ուրեմն նորադարձութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ քրիստոնէութիւնը ստուգիւ քարոզ ու ասրել:

Հաւատքը՝ ընդհանրական եկեղեցին ալ, պէտք է մէկ ըլլալ, բայց նորադարձութիւնը հաւատոյ միաբանութեան տեղ տարաձայնութեանց և վէճերու անսպառ ազբիւր մի բղխեցուց՝ ամեն մէկուն իրեն խելքին համեմատ գիրքերը քննելու թոյլատուութիւն ընելով, և իրեն դատմանքը բարի ու չար դործերը որոշելու և՛ գործ դնելու, ատոր համար նորադարձութեան մէջ խիստ շատ է կարծեաց տարբերութիւն, և այդչափ աղանդաւորները միմեանց հետ ամենեւին միաբան չեն: Արհնամարհանքները տանիք կամ տան և չորս աղանդներու բաժնուած են, խոսհրդապաշտները ինը: Համակերպեալ քան և չորս: Ուսերդապետ խոստովանութեան բոլորովին հակառակները վեց կամ եօթը. տանկ լմնցիր այլոց համար ալ:

Ընձմարտութիւնը կրօնքին ամենադարկատր և նեղբին հանդամանքն է, սակայն նորադարձութեան մէջ այդ բանը չգտնուիր: Ապրաձեւութիւնը Աշմարտութեան չաւաջնորդը՝ ոչ հեղինակութեան ճանապարհ, որ կը հելքէ, և ոչ սրամիտքանական հետանպատ, որ քիչերուն արուած է, և միշտ խաբող է: Ընչ որ տատուգութիւնը անանց մէջ պէտք է վնտռել: Սուրբ հոգիդ Աստուծոյ, արդարացուցման, ընորհոց, Քրիստոսի տեառն մերոյ

մարդեղութեան, և գրկեմ հաւատոյ ամեն մասանց վրայ
նորազանգները մեկ մը աս կողմը՝ մեկ մը ան կողմը հոդ-
ւոյ ակօվեալ կը ծվին։ Եւ յիրաւի հարկաւոր գիտենք աց
մէջ տարակուսած մնալը մարդկային սիրտը. անհանգիստ
ընելը աղետալի վիճակի է։

Ուրանց խորհրդոց թեան նորազանգները մոլորու-
թեան մէջ կը թափառին. այն որ չէ մէկ միւսի վրայ անց
հակառակ են, հապա լուրջ ընդունելու դէմ կը խօսին.
մոլորութիւնը միշտ հակասութեան մէջ կ'երևայ, և պրո-
թեան նման բազմատեսակ կերպարանքներու մէջ կը
մանէ։ Ընդհակառակն ճշմարտութիւնը ամեն ժամանակ
մէկ է. միշտ անայլայլութիւն մը ունի երեսին մէջ։ Ա-
ուրի վրայ իսկ սուրբ հաղորդութեան համար երևնան
և օրէն հակասութիւններ կը տեսնուին. ամեն օր ուրիշ
ուրիշ միաբեր ցոյց կուտայ. այսօր այն բանին կը հա-
կառակիը, որ ի երէկ ընդունած էր. միւս օրը կը դատ-
նար նորին ի ընդունելը, այն որ առջի օրը կը ժխտէր.
ասպա ուրեմն ճշմարտութենէ բոլորովին հեռի էր, և
առուգիւ խաբեայ մեկը, Պօղոս առաքեալն բսաձին հա-
մեմատ։ «Օ՛ն եթէ ըսը քակեցի՝ զնոյն վերստանգամ
շինեցեմ, ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւե-
ցուցանեմ»։ Գաղատացիս Բ։ Գլ։ Խդ։

Ա՛յս բաղաքականութիւնը որ եկեղ է՝ արդէն երեք
դար հղած չէ, և այսչափ տեսակ վարդապետութիւնն-
բով բաժնուած են, որոնց օր լինչ կը մտածուին. կար-
ծեմ որ քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը
իրենց նորահնար և կամակոր վարդապետութիւններնուն
մէջը բոլորովին պիտի կորնչուանեն. ըստ այնմ։ «Եւ
այլն անկաւ՝ ի մէջ փշոց, եւին փուշքն և խեղդեցին
զնա, և պտուղ ոչ ետու»։ Մատթ։ Գ։ 7։ Ա՛սոր համար
ընդհանրապես ամենայն քրիստոնէից և հոգեւոր հովիւ-
ներուն խրատ կուտամ որբազան Պօղոս առաքեալը.
«Զոսպեակսութիւնս առնելոցն արտաքոյ վարդապետու-
թեանն զսր գուբն ուսայք, և խորշեցարուք՝ ի նոցանէ։
«Օ՛ն այնպիսիքն աւուրս մերում՝ ոչ ծառայեն, այլ



«իւրեանց որովայնի, և քաղցրաբանութեամբ և օրհնու-
«թեամբ պատրեն զսիրտս անմեղաց»։ Հռոմ։ Ժ։ 17-18։

Ա՛պաքէն, բաւեմիտ ընթերցող. մի զարմանար այս
բողաքականները սուրբ գիրքին միտքը ասանկ ծուռ բա-
ցատրելուն վրայով, որովհետեւ ասանկ որ չընեն՝ կարող
պիտի չըլլան իրենց բազմատեսակ վարդապետութիւնին
յարմարցնելու, նոր աղանդներ հաստատելու։ Կ'ուզես
բոլոր տպած գիրքերնին և տետրակնին կարդա՝ ամե-
նուն մէջը եւիսւ խաբեական հնարք գործածելը են. մեկը
սը՝ սուրբ գիրքին բացայայտ վկայութիւնները աշխար-
հաբառի թարգմաններ են իրենց ուզածնուն պէս, և ոչ
սուրբ գիրքին մտացը համեմատ. և երկրորդ՝ խօսածնին
պէս, բերած վկայութիւնին պէս, իրենք ալ գիտնալով
Այդ՝ սիրելի ընթերցող, այս խրատներըս որ կատարած աստուածասէր և բարեպաշտ հայրը իրեն որդւոյն, և որդին ալ մոլի ընկերէն վերջը և թուղթին թերթերը կարդալէն յետոյ ինչ կ'ըսես, պետք չէ՞ որ որդիական հոգատարութեամբ խոնարհ ակնածութիւնով մը երախտապարտ շնորհակալութիւն մը ցոյց տար, և այս խրատարանութիւնը իբրեւ գանձ հայրենի ժառանգութեան պահէր և մտացը մէջ գանձէր։ Ո՞վ ինչ, ոմի քաղաքացիի յանդգնութեան և անառակութեան բարւոյ ատհակ և ապիրատ որդւոյն, որ վախճանակ շնորհակալութեան լերթեամբ պատասխան տուած, կը խոդրեմ հայր, ըսած, ինչու հանճար պարապ աշխատեցար, ինչու պարապ տեղը կը հոգնես, այս վախճաքաղ շատ գրամ ծախս ըրիր, յատուկ ուսումնական խնամատարը ուսուցչապետ կարգեցիր ինծի հանճար, ամեն օր ի՞նչ խրատներ կուտայիր որ ես ուսումնական և բարեկամութեան տէր ըլլամ, առանձնական սենեակ, և անոր մէջը գրատունը առանձին սակ թանգագին գրքերով լեցուցիր, արամագրութեան մը ընդունակութիւն մը չտնեցայ անոնցմէ բան մը գանձելու մտքիս մէջը, այդ տուած բարեկամութեան և աստուած-

պաշտօնեայն ըլլայիդ դէմ վախճան գոյանայ կը տես-
նամ իմ յիշողութեան մնացս ընդունակութեան պա-
տուհանները։ Ինչ որ կ'ուսուցանէին իմ խնամատարք
ուսուցիչներս վարժապետներս, ես ժամացոյցին կը նայէի,
որ երբ դասատուից ժամանակը դայ ժամանէ պիտի, որ
ես ընկերներուս սա ձաղկազարդ լուրթատանին մէջը
առանձնացած ուրախ ըլլալէն ետքս կամ թուղթ խաղալով,
Հնարք այն անհնարը որ գրքատունէն զարդարուած կը
առնուի, նկարտութեան տախտակ մը կը պաշարէ սրտիս
մէջը, բայց երբոր այն նայս կամ թուղթ խաղացող
ընկերներս կը տեսնայի՝ այնչափ ուրախ կ'ըլլայի որ եթէ
անոնց հետ առաւօտէ մինչեւ երեկոյ նստիմ և դիշերին
մինչեւ ցառաւօտս, յիրաւի կ'ըսեմ. քնաս չեմ զղջիր,
ասանկ խաղերու զբօսանքներու և ատոնց սիրոյ հետեւող
ընկերներու հետ առաւել հետեւիլ ախորժելի և ցան-
կալի է ինձ հայր իմ, քան թէ այդ խօսած ու գրած
բարոյականիդ միաք տալու, զբօսանքը և խաղը և քնու-
թեանս ըներմանց հետեւիլը ինձի անհամեմատ եղած է,
այս ընդարձակ ու համարձակ կենցաղավարութեանս սոս-
կումը չեմ կարող վոխել։

Ա. Յ խօսքերով ըստ ամենայնի յուսահատ եղաւ բա-
նիմաց հայրը այս տղային յանդգնի և լիրբ պատաս-
խանութեանը վրայ, և կտրած սրտով և տխրած
դիմօք դարձաւ առ ապստամբ և ստահակ որդին և ըսաւ,
ահա յայտնի ըրիր քուկինդ անհնազանդութիւնդ և ապի-
րատութիւնդ, ապա սրտմտութեամբ պիտի չըսեմ՝ ի հոդ
մահու. վասն զի գրուած է «Որդի անմիտ սրտմտութիւն
,, է մօր ,, Ա. Եւ գիտցայ որ դու նախատինք բերես պիտի
հայրն անուանես, ինչպէս գրուած է ։ «Ընծեք հօր որդի
,, անմիտ ,, Առակ. ԺԵ. 20. ԺԹ. 13. Ա. Յ ցառաջ
խօսքերը ըսելով մերժեց առջեւէն ինքնահաւան և մոլի
ստահակ որդին. և երկու տարիէն ետքը մեռաւ. և մնաց
որդին տիրող հայրենական ժառանգութեան։ Այլ
առանց քրտանց և աշխատութեան սեպհականեալ էր այն
ամեն հարստութիւնը, վասնորոյ մոլի և զեղջ բարքովը



սիտառ լրեն պատասխանի և փոխադարձ չար ընկերներովը
վատնել առնիքը՝ խաղերու զեղխութեան և անառակու-
թեան մէջ, ասկայն յետոյ այնպէս յետին թշուառու-
թեան մէջ ինկաւ, որ մինչեւ անգամ կը խնդրէր ծա-
ռայութեան մտնել, բայց և ոչ ոք կ'ընդունէր զանի,
քանզի թէ լրեն հայրենի ժառանգութիւնը վատնողը
մեծ այլոց հարստատութեան կընդառաջ ընել, քան այնմ,
,, Ոը ինքեան չար է, սրտի ուրախ բարի եղիցի ,, Առակ.
ԺԶ. 5. Այսպա թող օրինակ ըլլայ ատոր թշուառու-
թիւնը այլոց սոսկակ և անառակ սրտից, որ զգուշանան
ինքնահաւանութեան և յանդգնութեան չարախօսական
հիւքերէն, և ունկնդիր ըլլան սրտի մօք առաքինի ան-
ձանց բարի և օգտաւէտ խրատներուն, որով ըլլան բարի
մարդ և բարի քրիստոնեայ, չըլլայ որ վերջը մարմնաւոր
և հոգեւոր բարիքներու կարօտանան, ատոր համար խրատ
կուտայ երիտասարդներուն Սողոմոնեան առակը ։ «Որդեակ
,, որդեակ լսէր ինձ, և մի ապաքսա առնիցես զբանս իմ,
,, հետէ սրա՛ի նմանիլ զձանապարհս քո, և մի մերձենար
,, ՚ի դրունս տանց նորա։ Զի մի մանեսցես օտարագ
,, զկեանս քո, և զտարագուածս քո անողորմից։ Զի մի
,, լցցին օտարք ՚ի զօրութենէ քումմէ և մի մոցին վաս-
,, տակք քո ՚ի տուն այլոց։ Եւ զղջանայցես յետոյ,
,, յորժամ մաշեցին անդամք մարմնոյ քո։ Եւ ասիցես թէ
,, զինչդ ատեցի զկրթութիւն, և ՚ի յանդիմանութենէ խոր-
,, տասցաւ սիրտ իմ։ Եւ լսեի ձայնի կրթութեան իմոյ,
,, և ուսուցչի իմոյ ոչ դնէի զականջս իմ։ Սակաւիկ մի եւս
,, անկանէի ՚ի մէջ ամենայն չարեաց, ՚ի մէջ եկեղեցւոյ,
,, և ժողովրդոց ։ Առակ. Ե. 7—14։

Ա. ասս յետագայ գլուխն մէջ սորվինք թէ՝ ինչ մե-
ջացաւ առնել կընդանք ունենալ չար բնաւորութեան սո-
վորը մեր սրտին մէջէն ըստ ամենայնի խլելու և խոպան
մերժելու, որ այնուհետեւ տեղ չտնտեսի մեր սրտին
մէջը անկարդ աշխարհի ցանկութիւնները, անոնի և ըն-
դունայն բաղձանքները, ինքնահաւան վատաբարութիւնը
ու մոլորական և մոլեկան չար կիրքերը։

# ԳԼՈՒԽ Ժ.

ԱՊԱՐԻՆ բնական օրէնքի լուսով զգօնացեալ շատ քարի մարդիկ կը գտնուին աշխարհի մէջ, կը տես նես որ հաւատարիմ են բարեկամութեան՝ և պաշտպան աղգասիրութեան՝ և եղբայրասիրութեան կանոններուն, և պատրաստ են միշտ քաջութեամբ յայտնելու ընկերութեան և ազգայնութեան աղնիւ սիրոյն պարտաւորութիւնը գործով և արդեամբ. կը տեսնես որ հաճոյս և բարի վարք ունին, և անկեղծ սիրով հաստարակութեանը բարերար և օգտատարապյղ կը հանդիսանան, առատաձեռնութեամբ միլիոներով կ'ըլլան աղքատաց, բարեկրթութեամբ խոհական և քաջալաւ տանուտէրը եղած են և բարեկարգող գերդաստանի հայրանց: Ահա՝ ատանկ բնական լաւութիւն և բարեմիտ բնաւորութիւն ունեցողները կ'անուանուին բարի մարդիկ աշխարհի, որ միայն բնական օրինաց առաջնորդութեամբը բարի վարուց մէջ կը գտնուին: Հռով. Բ. 14: Ա.յս բնական օրինաց լոյսը ամենակարող արարիչն Աստուած մեր բնութեանը շնորհեր է. որ ատոր կանոնովը վարէ մարդս իւր կենացը ընթացքը ուղիղ և անմեղաբար, մանաւանդ զգաւշանայ խօսքի և գործի մէջ չմեղանչել: Սաղ. Լ.Զ. 3:

Ա.յս իսկ է բնական դատախարակ մարդկային մտաց, որ կ'ուսուցանէ և կ'առաջնորդէ մարդուս հարը բարիին որոշել, պարտաւորը դատել և անպարտը պաշտպանել, ժիր և նախանձաւոր ըլլալ բարեգործութեան և փութաջան, մերժել և անարգել չարագործութիւնը:

Ա.յս անգր շատ ապացոյցներ ունինք տալու, բայց ատոնց մէջէն բաւական կը համարիմ յիշելու միմիայն պատանեկին քաջասիրտն և աղքատկին Ա.բրայ գեղեցիկ որդին Ա.բրամայ քաջին, արդարև գեղեցիկ ոչ միայն արտաքին տեսլեամբ զարմանալի գեղաւոր, այլ և ներքին բնաւորութեամբ քաջալաւ և բարոյական լուսով շքեղապանծ. այս գովելի վեհ բնաւորութեանը չքնաղութիւնը



հանդիսացոյց աղջախտ քաջութիւն դէմ կենալով վախճանական Շամլրատայ Ալինոսի Աստուծոյ Թագաւորին չարախտաւոր կնոջը. վասն զի երբ որ այս Շամլրամ Ալինոսի մեռնելէն ետքը նստաւ մեծ Թագուհի Ասորեստանի մէջ, և անուանեցաւ Թագաւոր Ասորեստանի, լսեց Ա.բրայնը աքանչելի գեղեցկութիւնը, սկսաւ չարաչար առաքինութիւնը ցանկալ. այնուհետեւ մեծամեծ և ծանրագին ընծայներ և յաւուրէ մարդ խրկեց, որ Ա.բրայն գեղեցիկ հասնուցանի հասնի գնալու առ Շամլրամ և անոր հետ ամուսնանալու, և կը խոստանար որ բոլոր Ալինոսի երկիրները իրեն տայ, որ անոնց վրայ Թագաւորէ: Շամլրամին այս առաքանոց կանչը մերժեց Ա.բրայն գեղեցիկ ըստ ամենայնի դէմ կենալով յանձն չառաւ կատարելու անոր չար կանչը. ասոր համար ատոնիկ բարկացաւ Շամլրամ և պատերազմ բացաւ Ա.բրայնվրայ, ու եկաւ մինչեւ Ա.յսրարատ լեռանը մօտ դաշտին քովը. ու այն տեղը Ա.բրայն ալ իրեն զօրքերովը պատրաստեցաւ պատերազմիլ, բայց առ քաջասիրտն Ա.բրայ Շամլրամայ Հայաստանու վրայ անիրաւ չարձակմանը համար իրաւամբ սատակ բորբոքած ըլլալով՝ իրեն բանակին դլուխը անցաւ, ու կամեցաւ ինքնին մարտնչիլ իրեն թշնամւոյն հետ, և յանկարծ հանդիպելով անոնց սրոյն դիւցազնական մահուամբ մեռաւ. ինչպէս կը պատմէ Յովհաննէս կաթողիկոս պատմիչը: Տեսանք բարոյական գեղեցկութիւնը և բնութեան բարերարութիւնը. որ թէպէտ մեռաւ, բայց իր քաջալաւութեան և վեհանձնութեան անմահ յիշատակը թողուց:

Ա.յս բնական օրինաց կշռաւորը և չափաւորը կենցաղավարել, և աշխարհիս մէջ բարեկեցիկ ըլլալ կը վարդապետէ Սակրատ Լինոսատասերը, որ մեկնելի ձգեց աշխարհին փիլիսոփայական հետազօտութիւնները ու բնաշնորհական քննութիւնը, միայն բարոյական լինոսատասերութեան հետեւեցաւ, և կը պարապէր երիտասարդներուն սորվեցնելով կրթութիւն ունենալ, բարի և առաքինի վարուց առաքինութեան հետեւիլ: Կիկերոն կը հաստատէ Տակուեան խնդրոց երրորդ գրքին մէջ, որ Սակրատ եղաւ նախ

կին ուսուցիչ բարոյական խնամատարութեան Յանուց աղգին Ս.Թենդի մէջ։

Ս.յս խնամատարը դժբաղդ ժամանակի հանդիպեցաւ. վասն զի այն ժամանակները Ս.Թենդի մէջ բարքերուսանողքն երեսաւն բռնակալքնեը բացարձակ իշխանութիւն կը վարէին. Ս.ասոց ըրած և գործած անօրէնութիւնները կը հակառակէին բնական օրինաց բարոյական խնամատարութեան, որն որ կ'ուսուցանէր Սակրատ, Օր մը տեսաւ որ ասոնց քովը գիտութիւն չկայ՝ անգիտութիւնը սիրելի է, ասոնց մէջ ամբարտաւանութիւնը, անժուժկալութիւնը, անառնթութիւնը, անիրաւութիւնը կը շարունակուին, որով խղճալի հասարակութիւնը ասոնց բռնակալութենէն կը հարստահարի կրտաղնապի կը չարչարի, շատ կը ցաւէր կ'ուզէր որ ասոնց անօրէն գործոցը համար հանդարտ տանեսրանութիւն մը ընէ անոնց բռնակալութիւնը դադարեցնելու համար, Ա՛սոն որոյ երբոր Ս.Թենացաւ մէկ երեւելի ժողովքին գնաց նստաւ՝ անոնց մէջը ներկայացաւ Սակրատ և ազատ հանդարտ ըսաւ։ Ո՞վ Ս.Թենացիք մեծամեծք և փոքունք, լսարնք ինձ, հանգստօտ բանիս օրինակ մը ունիմ տալ ձեզ բարոյականութեան։ Ինկ անդհորդի մը չանձնեցին շատ մը անդհպք որ նոսամ տանի պահպանի ու սրածէ. որպ՝ Թէ որ այս անդհորդը երբոր նոսամելու տեղը՝ այն կենդանիները անհնամ Թողու և օրէ որ նիհարացանի և անոնց Թիւերը պակսեցնէ. ի՞նչ կ'ըսէք, հարկաւ պիտի խոստովանիք, որ այն անդհորդը անշուշտ չար ու վատ մէկն է. այսչափ ըսաւ ու լռեց։ Ս.ին տեղը կայնի այն երեսաւն բռնաւորներէն երկուքը Կրիտիաս և Ալկիբիադես, հասկցան որ խնամատարին այս ըրած այլաբանութիւնը իրենց հասնար էր, վասն որոյ խոկցին նոր օրէնք սահմանեցին՝ որ Ս.Թենդի մէջ չը սորվեցընեն մէկու մը ազատ խօսելու արուեստը, իմացաւ Սակրատ որ իրեն համար հակառակութեամբ սահմանեցաւ այս օրէնքը բռնաւորներէն, որպես զի ինքն ալ արգելուի աշակերտներն սորվեցունելէն բարոյական խնամատարութիւնը, զոր գործ կը ժողվեն



երիտասարդները և ինքն ալ կ'ուսուցանէր։ Ս.յս երկու օրէնսդիրներուն քովը մտածեաւ Սակրատ, իրրեւ յանգիտ արգելման պատճառը հարցուց, ինչէ՞ն հարկաւորեցաւ այդ նոր օրէնքը սահմանելու, այդ չէր հրամանը ի՞նչ խնամատարութիւն։ Երբոր անպատասխանի մնացին երկու բռնաւորները Կրիտիաս և Քարիկլէս, Սակրատայ խնամատարութեամբ ըրած լանդրոյն բռնաւորական իշխանութեամբ չանգիտեցան պատասխանելու. քեզ տեսէք, այսուհետեւ չըլլայ որ քու քովդ ժողվես աշակերտներ, և ուսուցանես. այլ և համարձակ կ'ըսեմք քեզի, չժողվիս պիտի քու քովդ ուսանողներ, և դուն ալ ուսուցիչ պիտի չըլլաս մեկուն մէջ անգամ։ Ո՞րմանալի՞ չանգիտութիւն, դիտեր, սիրելի՛ ընթերցող, Թէ երբ Կրիտիաս բռնաւորը, ժամանակաւ յառաջ Սակրատայ աշակերտներեն մէկն էր, որ իրեն ամբարտաւան վատ և ժանտ բնաւորութեանը հակառակ երեւցաւ Սակրատայ բարոյական վարդապետութիւնը, վասնորոյ չէ Թէ միայն հրաժարեցաւ աշակերտութենէ, այլ մեծ բռնաւորներուն հետ միացաւ ու իրեն առաքինի և բարոյական վարժապետին հակառակեցաւ ու եղաւ մեծերիմ Թշնամի։

Ս.յս բռնաւորներուն ժողովը շատ նեղութիւն և տագնապ կուտային Սակրատին բազմաթիւ նախատանօք, որ չը սորվեցունէ բարոյական խնամատարութիւնը, բայց այն ամենը մէկդի ձգելով՝ կը շարունակէր իրեն հանդարտութիւնը առաքինական վարքը օրինակ ըլլալով ամենուն։ Ինոր համար նայեցան այն բռնաւորները զրպարտեցին Սակրատայ վրայ այս երկու բանը, մէկ մը որ կ'արգիլէ հասարակութիւնը մեր աստուածոց (կուռքերուն) պաշտօն մատուցանելէն, ու նոր աստուածներու պատիտալով՝ անոնք պաշտել կը սորվեցունէ. երկրորդ զրպարտութիւնն էր այս։ Ս.Թենացւոց երիտասարդներուն վարքը վատ ընելու ապականելու խրատ կուտայ։

Ս.յս երկու չարաչար զրպարտութիւնը Անէլտոս Սակրատայ սիրելի Թշնամին հնարեց, որ անիրաւ ձարտարախօսութեամբ և ճառամարտութեամբը համոզեց շա-

տերուն միտքը ու մահապարտ դատելին Սիլուանը, որ միայն իրեն կոչմը ունէր իրեն անձնազոհելուն և ձշմարտութիւնը ու անուղ կը մխիթարուէր։

Ու այն անիրաւ բռնակալներուն ժողովին մէջ հանուածակ և անվեհեր խօսեցաւ Սիլուան՝ այսպէս. զիտիք, ով Թեոդոսիք, որ ես բնաւ պատիւ և փառք չեմ ընդուներ մեկէ մը բարոյական վարդապետութեան համար։ Այլ ալ յայտնի է որ իմ նախանձոտ հարսնիս Թշնամիներս, որքան որ իմ վրայ սխալանքներ գտնուած են, բնաւ չեն կրնար պարտաւոր կամ յանցաւոր ընել զիս յայտնի վկայութեամբ մը, վասն զի իմ քարոզանդակ գործս, վարդապետութիւնս և խրատս այս երեք ամենուն միանգամայն ձերբերուն և երկտասրդներուն մարմնաւոր զգայական բաղձանքներու չը հետեւիլ, աշխարհի անցաւոր և խաբուսիկ սիրոյ չը կապուիլ, այլ հանդերձեալ բաղձանաց բարոյական առաքինութեան հետեւիլ և անոր սիրովը վառուիլ։ Ոչ Թեոդոսիք, ես ձեզի բնաւ վարդապետած չեմ որ առաքինութենէն չը ընդունիլը մարմնաւոր ճոխութիւնը և հարստութիւնը, այլ միշտ ընդ հակառակն ուսուցի խօսեցայ, որ մեծութիւններըը յաւիտենական առաքինութենէն և անկէց ծնունդ առնեն ամեն մնաւոր և մարմնաւոր բարիքներըը։ Այդ թէ որ այս օրինակ խօսքերս երկտասրդներուն մոտը և վարուցը վնաս և ապականութիւն կը բերէ, ասա ես ինքնին կը խոստովանիմ, ոչ Թեոդոսիք, որ ես իսկ մեղապարտ եմ և դատապարտութեան պարտաւոր։

Վասն այնը ըզքէք, ինչպես որ կըհաճիք, դիտցիք, որ ես բնաւ չեմ ապրիլ ուզեր, չեմ ուզեր վերադարձնել իմ վարդապետութիւնս բարոյական ուսմանց վերայ, իմ ձեռքս չէ այս ուսման ընթացքին դադար ընելը, և կամ այս կերպով վարժելու պաշտօնս դադրիլը, վասն զի այս պաշտօնին մէջ կարգեց զիս Աստուած (1)։ Ես ինչը բարեբաղձ իմ սրտիս

(1) Սիլուան երեն բարոյական խոստութեան ըստովը եմացաւ որ աստիճան աշխարհի կայ, և այն է Աստուած, որ և անուանեց վերնականեան առաքինութիւն։



մէջը այս բարոյական ուսման հետանդը, որով պիտի վարժուէի հրահանգեմ իմ սիրելի քաղաքակիցներս, եթէ այժմ ինձի համար պատրաստած դատն մահուան երկիւղը ստոնձութիւն տայ՝ ու թողում այս բարոյական ուսմունքը, որն որ յանձնից ինձի վերնականեան առաքութիւնը, և պատրաստ է մահապարտել հայրենեացս։ Այսքէն վատաղարծ և դատուելու արժանի ըլլալի անօրինի մը պէս, և աստուածային հատատոյ պահանջմունքէն մերժուած։

Վասն ձեր մտքին մէջը հաստատ դրեր էք զիս խրատելու որ լռեմ այսուհետեւ և քոտ ամենայնի դադարիմ բարոյական ուսմունք սորվեցնելէն։ այս մասին ձեզի իմ պատասխանս այս է, ով Թեոդոսիք, կը պատուեմ կը մեծարեմ զձեզ, և երբեք իմ սիրելի հայրենակիցներս կը սիրեմ զձեզ, բայց քաջ համոզուած եմ որ շատ բարի է և լաւագոյն Աստուծոյ հնազանդիլ քան թէ ձեզի, որչափ կենդանի եմ չպիտի լռեմ, հարկ է պարտք է ինձի խնամատարութիւն և պիտի յորդորեմ զձեզ, որ հետեւիք ուսանիլ, մի յուսաք ինծմէ, ով Թեոդոսիք, որ մահուանէ պիտի երկնչիմ, ու ձեզի պիտի ապաստանիմ և ձեզմէ իմ վրկութիւնս պիտի խնդրեմ այս դատաստանին մէջ՝ որ ամբարիշտ և անիրաւ մարդու մը պէս կը զրպարտուիմ ու կ'ամբաստանուիմ Անտիոքեան (1)։ Այսպէս քաջասիրտ և լրջամիտ խորհրդով և վճռականն դիմեք հրապարակախօս առնուազդութեան ըրաւ Սիլուան, իրեն իրաւունքը և հաստատուն մտաց խորհուրդը յայտնելով ամենուն, և ամենքը թէպէտ ան ’ի բերան եղան, բայց այն անադորոյն բռնաւորաց յանդուգն նախանձը և ժպիրկ սրտմտութիւնը առաւել ևս զայրացուց և բորբոքեցուց յետին Թշնամութիւնը, անիրաւ դատաստանաւ վճռեցին Սիլուանոյ անպարտական մահ, որն որ ընդունեց անվրդով և անխռով

(1) Անտիոք երկու՝ Պիսիդեայ և Մելիտոս սովորեալ Թշնամիներն էին Սիլուանոյ, ասոնք առիթին մէջ զրպարտութեան և ամբաստանութեան երեն Սիլուանոյ վրայ, մինչեւ հանեցին անիրաւ վճիռ մահուան։

ոգւով։ Ա.ին տեղը դանուելոյս հաւատարիմ աշակերտներն ժկիլ Պողոսեան անուն, և ապէխոսալ սրտիւ աղաչակեց բարձրաձայն այն անիրաւ ժողովին մէջը, ահա անպատճառ մեռանի Սակրատ, որ դարձաւ անոր քաղցրալիր դիմաք ու ըսաւ, սիրելի՛դ իմ, ինչ կ՚ուզեիր, կը խընդրեիր որ ես մեղապարտ մեռանիմ, գիտցիր, որ Աստուածը ու Մեհեստոսը զիս կը մեհաթանեն իրենց աստուածանալու Թեաւքը և զպատրաստեցեալը, բայց միւս մը չկայ այս տեղս։ Ատանկ անվերջով և անվերհիս քաջասրտութեամբ կը խօսէր, և ամենուն իրեն սրտմտիլը կը հանդիսացուցանէր և կը զարմացանէր մինչեւ վերջին շունչը, որն որ սպառեցին մոլեխինդ դեղ մահու արբուցանելով։

Ա.յս գերահռչակ խմաստասիրին Սակրատայ գիւտաղնաւեան արիութեանը քաջահմուտ են ուսումնասէրները, որունք որ կարդացեր են Պղատնի հնախօսութիւնը։

Պատճէն տեսանը որ այս Սակրատ խմաստասէրը ինչպէս եռանդուն էր բարոյական խմաստասիրութեան հոգւով, որով կը փութար և կը հոգար միշտ Աթենացիները կրթելու և բարոյական ընելու, որպէս զի ամենքը ըլլան բարի վարուց տէր և բարի մարդ աշխարհի։

Խմաստասիրին այս աշխոյժ և վառվռուն ոգին ոչ ոք կարողացաւ խափանել և կամ շնջուցանել, մանաւանդ վատթարագոյն չարասէրը կրնաք բարոյական աղնիւ կրթութիւնը առեցողները բարբարոս սուզ թշնամիները բնաւ երբէք կարող չեղան այս վեհանձն և բարեհամբաւ խմաստասիրը ապառնալիքներու երկիւղներով արգիլելու, և կամ հրաժարեցնելու իր մտացը հաստատուն դիտաւորութենէն որ էր միայն անխոնջ ուսուցանել ամենուն բարոյական խմաստութիւնը։

Ա.րդ՝ այս տեղս, ո՛ բարեմիտ ուսումնական սիրելի, կշռադատեա մաօքդ բաղդատելով հոգիտդը մարմնասիրին հետ, և ապա սկսի՛ր իրաւամբ ըսելու, թէ որչափ առաւել քան զՍակրատ խմաստասէրն վատթարչան վատահամբաւ էին և քաջադոյն արիացած քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը քարոզող սրբազան Աւետարանիչները



եւ Աքաւնները՝ առաքելապատիւ սրբազան Հայրապետները և վարդապետները։ Վասն զի ասոնց քարոզութեան պաշտօնը գերազանց էր քան զպաշտօն խմաստասիրին, ասոր կրթութեան ուսմունքը մարմնաւոր էր և բնական օրինաց կը հետեւէր, իսկ անոնցը հոգեւոր էր և շնորհական և աւետարանական օրինաց կը ծառայէր։ Գիտենք որ բարոյական գիտութիւնը մարդս ըստ աշխարհի քաղաքավար և աշխատական բարի մարդ կ՚ընէ, բայց հոգւոյն երջանկութիւնը կարող չէ տալու, որ է Աստուծոյ շնորհացը և փառաց ժառանգ ըլլալ, որով պիտի ըլլանք բարի մարդ Աստուծոյ, բայց և այս կ՚ըլլայ աստուածպաշտութեան կրթութիւնով։ Որքան բարոյականին հետեւողը կ՚անուանի միայն բարի մարդ աշխարհի, իսկ աստուածպաշտութեան հետեւողը միանգամ կը կոչուի բարի մարդ Աստուծոյ։ Ինչպէս այն գերագոյն և վեհ վերատութիւնը կոտայ Պօղոս առաքեալը կատարեալ աստուածպաշտութեան, ուղղափառ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան հետեւողներուն այս օրինակ շքեղ անուանակոչութեամբ։ ,, Ա.յլ դու ո՛վ մարդ ,, Աստուծոյ փախիր յայնցանէ և երթ զհետ արդարութե՛ ,, աստուածպաշտութեան զհաւատոց ,, Ա. Տիմ. Զ. 11։

Բարոյական գիտութիւնը մարդուս չար ու մոլի կիրքերը կը յաղթէ ու կը մեռցէ և վարքերը ուղղէ բարի ընելու։ Իսկ հաւատարեալ քրիստոնէական կրթութիւնը անկրօնութեան մոլորութիւնները և աստուածայական շնորհաց թերագրութիւնները կը յաղթէ ու կը մեռցէ մարդուս կամքին միտքին ու սրտին, և աստուածային շնորհաց ձիրքերով կը զարդարէ և աւետիս յաւիտենական կենաց կը պարգեւէ։ ապա ըստ առաքելոյն։ ,, Արմնոյ ,, կրթութիւն առ ոսկաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս ,, կենաց ունի զարդիս և զհանդերձեալսն ,, Ա. Տիմ. Դ. 8։

Բարոյական գիտութեան լոյսը կուտայ բնական օրէնքը՝ որն որ աստեղաց նուազ լուսաւորութեանը կը համեմատէ Լուսնկոտրանը, իսկ հատարեալ աստուածպաշտութիւնը

կը լուսաւորի քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան պայծառագոյն լուսովը, որ կը համեմատի ըստ Պահլեւ բանին արեգական համատարած լուսափայլութեանը։ Յով. ԺԲ. 36—46։

Բարոյական մաքրութիւնը մարդս հոգւով և մարմնով կատարեալ բարի և Աստուծոյ հաճելի կառնէ, բայց քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ լոկ չէ ընելը, այլ քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ բաւական հոգեւոր կրթութիւնը հրահանգութիւնը կատարեալ բարի կընէ մարդը և Աստուծոյ հաճելի։ ըստ այնմ։ ,,Օրը մեքն քարոզեմք, և խրատեմք զամենայն ,,մարդ, և ուսուցանեմք զամենայն մարդ կատարեալ ՚ի ,,Քրիստոս Յիսուս,, Կող. Ա. 28։ ,,Աստանց հաւատոյ ,,անհնար է հաճոյ լինել Աստուծոյ,, Եբր. ԺԱ. 6։

Արդ՝ թէ որ այսքանիկ հաւատօրէն մը խոնարհութիւն կայ քարոյական մաքրութեան և քրիստոնէական հոգեւոր կրթութեան մէջ, ապա այս Աբեւտարանի ճշմարտութեան հոգեւոր ուսուցչներուն և քրիստոնէական ազգային վարդապետութիւնը տարածող քարոզիչներուն հաւատքէն անկեղծ արիւթիւնը և եկեղեցութիւնը առաւել ազատ չելլէ պիտի ըլլայ բարոյական խնամատարութիւնը տալէ ցառնող Աստուածն և ուրիշ խնամատարներուն։ Այսպէս վերջին խնամատարութեան անուսուցը և անպատշաճ լուսովը վայելուն զարդարուած կին։ ,,Օ խնամատարն խօսիմք ,,ընդ կատարեալս, զխնամատարին ոչ աշխարհիս այսորիկ, ,,այլ խօսիմք զԱստուծոյ խնամատարին ծածուկ խոր- ,,հրդով,, Ա. Կոր. Բ. 6։

Սուրբ Հոգւոյն Աստուծոյ առնակարող անյաղթելի զօրութեանը արհասած կին։ ,,Մեք ոչ եթէ կիսոյկ ,,աշխարհիս առաք՝ այլ կիսոյն որ յԱստուծոյ,, Ա. Կոր. Բ. 12։ Նէ Յիսուսի Քրիստոսի հաւատոյ ձրձռատնէ սիրովը սասակի վառուած կին։ ,,Այլ մեկնեսցէ ,,զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի, ներզուէ, թէ անձկութի, թէ ,,հալածանք՝ թէ սով՝ թէ մերկութի՝ թէ վիշաք՝ թէ սուր. ,,արկեալ և գրեալ է, վասն քո մեռանիմք զօրհնեալդ, ,,համարեցաք իբրեւ ոչխար ՚ի սպանդ,, Յռոմ. Ը. 35։



Վանաւանդ առաւել սրիւթիւն ունէին հաւատոյ ճշմարտութիւնը, աւետարանական ազգամիտ վարդապետութիւնը քարոզելու համարձակ և անեղկիւղ։ որով հետեւ անքննելի տպաւորած է իրենց յիշատակութիւնը մէջ և հաստատուն ներգործած այն Յիսուսի Քրիստոսի անվոխելի և ամենազօր խոստումնքը։ ,,Օ և ես տայ ,,ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ ,,հակառակ կամ ատել պատահանի ամենեցուն հակառակ- ,,կացեք ձերոյ,, Ղուկ. ԻԱ. 15։

Ուրեմն ունկնդիր ըլլալէ այս համարձակ քարոզիչներուն սրբազան Աւետարանիչներուն և Առաքեալներուն և առաքելական սրբազան Հայրապետներուն և վարդապետներուն, որ սուրբ աւետարանը ազգամիտ վարդապետութիւնով, սուրբ դիրքերուն հեղինակութիւնովը կը քարոզեն, և ուղղափառ քրիստոնէական կրօնքին ըստ շաւղով ձանապարհին կառաջնորդեն, և աստուածային շնորհացը և փառաց արժանաւոր կընեն։ այս տեղ հետեւաբար վկայութիւններուն ալեկոծ մը մեզ մտաց խորհրդածութիւնը տանք։ ,,Այլ ոչ վասն նոցա միայն ապա- ,,չեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն ,,նոցա յիս,, Յով. ԺԷ. 20։

,,Օ ամենայն որ կարդացէ զմեռն տեառն, կեցցէ։ ,,Իսկ զնացէք կարդացէք, յոր ոչն հաւատացին, կամ ,,զնացէք հաւատացէն, որում ոչ լուան, կամ զնացէք ,,լուիցեն առանց ուրուք քարոզելոյ։ Ղուկ. Ի. 15–14։

Այս ուղղափառ հաւատոյ ճշմարտութեան և փրկութեան ուսմունքը մարդկային մտաւարժութեամբ և բնական դիտութեամբ ստացուած արդիւնքնիս չէ, այլ աստուածային ներքին շնորհոյ յայտնութեան և ներգործութեան ձիւ պարգեւն է, որ կը շնորհի Աստուծոյ անսահման մարդասիրութիւնէն, և դերբնականապէս կը լուսաւորէ խոնարհութեամբ և սրբութեամբ սրտի ընդունողներուն միտքը, որով կարող կըլլայ հաւատոյ ճշմարտութիւնը ըստ ամենայնի ընդունելու և սրտի մտաք ճանչնալու ու այնուհետեւ մոլորութեան ու անհաւա-

տութեան կորստապատիւը դաղափարները միտքին մերժե-
լու և անհետ ընելու. սակը հանար կը գրէ Պօղոս առա-
քեալը. «Օ՛ի ընդհօք նորա էք վիրհատեալք՝ ի ձեռն հա-
»ւատոյն, և այս ոչ՝ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է»։
Եփես. Բ. 8։ Ա. Կորն. ԺԲ. 9։

Ա. յս առաւածային ներդործական շնորհաց պարգեւը
արդեօք ոմն արժանի կ՚ըլլայ առնելու և արդիւնաւորե-
լու սրտին ու մտքին մէջը, անշուշտ ոմն որ Աստուծոյ
երկիւղը ունի սրտովը և պարզութեամբ մտաց կը կարդայ,
կամ մեկ կ՚ընէ առաւածաշունչ սուրբ գիրքերը, և
անոնց ողջամիտ վարդապետութիւնը լսելու և սորվելու
կը հետեւի, որով կ՚ըլլայ կատարեալ հաւատացեալ և
բոլոր քրիստոնեայ բարի վարք ունենալով. և առնցմով
բոլոր մարդ Աստուծոյ, այս խօսքերուս հետ հշտապատճ
բաղդատէ երանելի Պօղոս առաքելոյն գրածը, «Ամենայն
»գիրք առաւածաշունչ և օգտակարք՝ ի վարդապետու-
»թիւն են, և՝ ի յանդիմանութիւն և յուղղութիւն,
»և՝ ի խրատ արդարութեան, զի կատարեալ եղիւ մարդն
Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հատուցեալ»։
Բ. Տիմ. Գ. 16—17։ Սակ ապացոյցը կ՚ուզին առնալ,
կարդան Գործք առաքելոցը, որուն մէջ կը տեսնուս, որ
յաւուկ առաւածային ազդեցութիւն մը եղաւ Փիլիպ-
պոս առաքելոյն, որպէս զի երթայ Եթովպացւոյ հարա-
ւային սահմանակողմը, որ կ՚ըսուէր Գազա կամ անա-
պատ, իսկոյն երթաց Փիլիպոս այն կողմը, և տե-
սաւ որ անկեց կառքովը կ՚անցնէր այն առաւածավախ
անուանի հզօր նեղբինի մարդը, որ Սաղմոսեան տա-
ճարին երկրպագութիւնը ընելէն ետեւ Երուսաղէմէն
վերադարձ կ՚ընէր, և այն կառքին մէջ նստած Եթովպ
մարգարէին գիրքը կը կարդար. նոյնժամայն վերտին
Աստուծմէ ազդեցութիւն եղաւ Փիլիպոս առաքելոյն
այսպէս, մտեցիր ու ել այդ կառքիդ մէջ. մօտեցաւ
Փիլիպոս նեղբինին կառքին, և նայեցաւ որ կը կար-
գար Եթովպ մարգարէութիւնը, մեկն՝ ի մեկ հար-
ցուց անոր. արդեօք կը հասկնաս այդ կարդացածդ միտքդ։



այն ալ պատասխանեց ի՞նչպէս կարող կ՚ըլլամ գիտ-
նալու իմանալու. թէ որ մեկը չառաջնորդէ չըսորվե-
ցունէ լինի, և այս ըսելով՝ հրաւիրեց Փիլիպպոս առա-
քեալը իրեն կառքը ու իրեն քովը տեղ, և կարդացած
Եթովպ մարգարէութեան գիրքին տեղը այսբացուած էր։
»Իբրեւ ղոչխար՝ ի սպանդ վարեցաւ, և իբրեւ գորով
»առաջի կտրչի անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան
»իւր. ՚ի խոնարհութեան նորա դատաստան նորա բար-
»ձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնի
»յերկրէ կեանք նորա»։ Եսայ. ԾԳ. 7։

Ա. յս տեղս մտաւութեամբ մը կարգալով նեղբինին
սկսաւ խնդիր ընել Փիլիպպոս առաքելոյն, կ՚ազաչեմ
քեզ ըսաւ, Եսայի մարգարէն այս խօսքը որո՞ւ համար
կ՚ըսէ, իրե՞ն համար, եթէ ուրիշ մեկու մը համար։
Ա. յնուհետեւ Առաքեալը խօսելու սկսաւ ու քարոզեց
անոր, որ այս խօսքերը մարգարէութիւն է Յիսուսի
Քրիստոսի մարդեղութեան ու չարչարութեանն և խաչե-
լութեանն վրայ՝ և թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստու-
ծոյ և փրկիչ աշխարհի։

Կ՚ա տեսանի, որ երկիւղած Աստուծոյ բարեմիտ նեղ-
բինին կարդալով Աստուածաշունչ սուրբ գիրքին Եսայեայ
մարգարէութիւնը, և անոր վրայ խորհելովը Աստուծոյ
կողմանէ խրատեցաւ իրեն Փիլիպպոս առաքեալը, և անոր
ողջամիտ քարոզութիւնը լսելով՝ և մտացը մէջ գանձե-
լովը վերտին աստուածային ձրիական շնորհաց հանդի-
պեցաւ և քրիստոնէական հաւատոյ պարգեւին մասնակից
եղաւ, և՝ ի ձեռն նոյն առաքելոյն Փիլիպպոսի մկրտե-
ցաւ, և զօրացուցիչ արդարացուցիչ շնորհաց սուրբ Հո-
գւոյն Աստուծոյ արժանացաւ, ինչպէս գրուած է։
»Եթաց Փիլիպպոս զբերան իւր և սկսեալ՝ ի գրոց
»յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅիսուս։ Իբրեւ եր-
»թային ճանապարհայն, եկին՝ ի ջուր մինչ, և ասէ
»նեղբինին, ահաւասիկ ջուր՝ զի՞նչ արգելու զիս՝ ի
»մկրտելոյ, և ասէ ցնա եթէ հաւատաս բովանդակ սրտիւ
»քով՝ մարթէ։ Պատասխանի ետ և ասէ, հաւատամ

,, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ։ Եւ հրա-
,, մայեաց կացուցանել զկառան՝ և իջին երկոքեան ՚ի
,, ջուրն, Փիլիպպոս և նեղքինին, և մկրտեաց զնա։ Եւ
,, երբեւ ելին ՚ի ջրոյ անտի, Հոգին սուրբ եկն ՚ի վերոյ
,, նեղքինոյն ,,։ Գործ. Ը. 26—29։

Ահա այս է առաւելագոյն գերբնական իմաստութենէն հաւատոյ աշխարհութիւնը սորվելու միջոցը և կերպը, և անկէց լուսաւորելուն հնարքը. ըստ այնմ։ ,,Գրեալ ,, է ՚ի մարգարէս, և եղիցին ամենեքեան ուսեալք Աս-
,, տուծոյ, ամենայն որ լսէ ՚ի Հօրէ և ուսանի, դայ առ իս։
,, Յհ. Զ. 45։ Եթանէ քեզ Սիմոն որդի Յովնանու,
,, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայրն իմ,
,, որ յերկինս է ,,։ Մտ. ԺԶ. 17։ Ա. յս առաւելագոյնս հնարհոյ պարգեւին հանդիսեցաւ այն Աստուծոյ երբ կիրեղաց Յիսուս անուն կինը, որ երբոր Պօղոս առաքեալն քարոզելիքնը լսելով գնաց, ու պարզ մտօք և երկիւղածութիւնով մոկի կ՚ընկնէր, առաւելագոյնս նեղքին հնարհոյ ծագեցաւ անոր սրտին մէջը՝ որով արժանաւորեցաւ քրիստոնէական հաւատոյ աշխարհութեան առաւելագոյնս պարգեւը ընդունելու և մկրտուելու Պօղոս առաքելոյն ձեռքով. ինչպէս գրուած է։ ,,Կին ան-
,, անուն Յ Լեդիա ծերասպաձառ՝ ՚ի Թիւատիրա քաղաքէ,
,, երկիւղած Աստուծոյ՝ լուաւ, զորոյ սիրտ Տէր բացաւ
,, զիւրա անսալ խօսիցն Պօղոսի ,,։ Գործ. ԺԶ. 14։

Այս այս երանաւետ հաւատոյ աշխարհութիւնը մեզի աշխարհիս և բարի քրիստոնեայ պիտի ընէ, վասն որոյ այս ուղղափառ հաւատոյ դաստիարակութիւնը և կրթութիւնը մեզի սուրբ եկեղեցին Քրիստոսի առաքելական լուսով, և մանաւանդ սուրբ գրոց հնչնականութիւնով կը մատակարարէ այն առաւելագոյնս հաւատոյ շնորհքները ողջախոհ և անարատ վարդապետութեամբ. առոր համար կը գրէ Պօղոս առաքեալը Տիմոթէոս աշակերտին, որ հաստատուն պահէ ողջախոհ վարդապետութեան այս անարատ գաղափարը որ լսեմն լսեր ու սորվեցուցեր էր։ ,,Ընդէնս օրինակ ողջմտութեան



,, քանիցն, զոր լուար յինէն լսեալ՝ հաւատովք և սիրով որ
,, ՚ի Քրիստոս Յիսուս ,,։ Բ. Տիմ. Ա. 13։

Ա. յս աստուածանական ողջմտիկ վարդապետութեան մէջ պիտի զօրանայ ամէն մեր աստուածհաճոյ առաքինութիւնը օր ըստ օրէ. և մեր անձը հոգեւոր երջանկութեան և բարեաստութեան մէջ գտնելով՝ սուրբ Հոգւոյն Աստուծոյ շնորհքներն պիտի պաշտպանեն, և ուղղափառ հաւատով և մաքուր սրտով Աստուծոյ մերձենալ և հաճելի պիտի ըլլանք։ Ա. յս էր որ մեզի քարոզից մեծ Հայրապետն մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչն, ըսելով։ ,,Պիտոյ է մեզ դաստիարակութիւն
,, աստուածայնոյն ՚ի հրահանգել զմեզ ՚ի լաւութեան կեր-
,, գըս, զի յանձանձեալք ՚ի շնորհաց սուրբ Հոգւոյն,
,, չխարաստութեամբ առ եղծուածս զվատաթափ արդարու-
,, թեան սուրբ սրտիւ և ուղղափառ հաւատով Աստ-
,, ուած ,,։ ՚ի Նար. Բ. Յաճախ։

Այսպէս պարտ է մեզի միշտ զգուշանալ, որ չըլլայ թէ հակառակ ողջմտիկ վարդապետութեան առաքելականն աշխարհութեան, և սուրբ գրոց վկայութեանը անհամեմատ՝ նորահնար խաբեական մարդկային դիւրաթափոր մտացը հաճելի, և մարմնասէր անօրժակաց ընդունելի, և աշխարհային ցանկութեան յարմարատոր մոլար վարդապետութեան ունկնդիր ըլլալով՝ առեղծ և մերժոտ գտնուինք ուղղափառ հաւատոյ ողջմտիկ վարդապետութեանը. վասն զի Պօղոս առաքելոյն սուրբ Հոգին աղեկ, և այն ալ մարգարէացաւ ու Տիմոթէոս աշակերտին գրեց թէ՝ ժամանակ պիտի ըլլայ, որ հաւատացեալ մարդիկներն մոկի պիտի չընդունին ուղղափառ հաւատոյ ողջմտիկ և անարատ վարդապետութեան, և հակառակին պիտի սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի միակերպ և ուղիղ և աշխարհ քարոզութեանը, այլ կողմնակցութեամբ մեկզմեկ բաժնուելով՝ ամեն մեկ կողմը իրենց կամացը հաճելի և ըսելացը ախորժելի քարոզիչներ պիտի ունենան, և Քրիստոսի աշխարհութենէն պիտի հեռանան, ուրանգի եկեղեցի ժամանակ, ըլլ ողջմտութեան վարդա-

,,պետութեան ոչ անապացեն, այլ ըստ խրատուն
,,ցանկութեանց կատեսցեն իւրեանց վարդապետս, ըստ
,,մորմանջելոյ ականջաց իւրեանց, և ի ճշմարտու-թենէ
,,անտի դարձուցանիցեն զականջս և յառասպելս կործա-
,,նեսցին,, Ա. Տիմ. Դ. 3—4։ Ա.յս անմիաբանու-
թիւնը և բազմատեսակ բաժանումը և վարդապետու-
թեան անհամաձայնութիւնը հակառակ չէ՞ մի աւետա-
րանական ճշմարտութեան և առաքելական ոչղամիտ քա-
րոզութեան։ Ա.յ՛ պիտի ըսես, թէ որ աւետարանական
և առաքելական ճշմարտութեան ուղղափառ մօտ հետե-
ւող ես, վասն զի Յիսուս Քրիստոս ինքնին յայտնեց, որ
իրեն բարեբար կամացը հակառակ լակ է անմիաբանու-
թիւնը և քրիստոնէից բազմատեսակ բաժանումը, ասոր
համար յայտնի և ամենուն լսելի խնդրուած ըրաւ առ
Հայր Աստուած, որ ամեն հաւատացեալները հաւատոյ,
յուսոյ և սիրոյ միութեան մէջ ձնան, զանազան վար-
դապետութիւն և բազմատեսակ քարոզիչները չունենան
և այլայլութիւն չբերեն քրիստոնէական ոչղամիտ և ու-
ղիղ հաւատոյ միութեանը մէջ. ըստ այնմ՝ ,,Ա.յլ ոչ
,,վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն
,,հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքեան մի լինեն,
,,որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ... Ընդ ես զնոսա
,,զոր եառեր ինձ՝ եառ նոցա, զի լինեն մի, որպէս և
,,մեք մի եմք,, Յով. ԺԷ. 20—21։ Այդ, տես, քննէ,
Քրիստոսի եկեղեցին չէ՞ որ այս հանգամանք և հանգիստ
միաբանութենէն ձերբազատ և բազմացաւ։ ,,Ընդ
,,ի կատարել աւուրցն պենտեկոստէից էին ամենեքեան
,,միաբան ի միասին։ Եւ բազմութեան հաւատացելոցն՝
,,էր սիրտ և անձն մի,, Գործ Բ. 1։ Դ. 32։

Տէս, Պօղոս առաքեալը քրիստոնէական խորհրդական
միաբանութիւնը անխոտոր և հաստատ պահելու համար
ունեցած անժխտելի պատասխանութիւնն, ինչպէս ճշմա-
րիտ ու ճիշդ պատգամներով կ'ինքնաբանէ։ ,,Փոքր
,,պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութե-
Եփես. Դ. 3։ Ասոնք ամենը մէկ սեպհական ժողովուրդ



Քրիստոսի ենք, և ամենքս հոգեւոր և խորհրդական
մարմին Քրիստոսի ենք, և մէնք ես ամենուն ընդհան-
րական դրախ կենդանարար և զօրացուցիչ ամենեցուն։
Եփես. Ա. 22։ Կողոս. Ա. 18։

Եւս և ամենքս մէկ հօտ պիտի անուանիմք Քրիստոսի
և մէկ աւետարանական ճշմարտութեան հոգեւոր փարա-
խին մէջ ժողոված, և ամենուս վրայ ինքնիշխան մի մե-
ծին հովիւ քաջ և հովուապետ ամենայնում ինքն Յի-
սուս Քրիստոս է խոստացեալ։ Յով. ժ. 11—14—16։
Գործ. Ի. 28։ Եբէր. ԺԳ. 26։ Ա. Պետ. Ե. 2—3։

Այսպէս ինչպէս որ ընդհանրական և կենդանարար դրախ-
նիս մի և նոյն Քրիստոս է, և ամեն ուղղափառ և բա-
րեպաշտ քրիստոնեայներդ անոր խորհրդական մարմնին
կ'անուանին, հաղորդուած ըլլալով անոր սրբարար շնոր-
հացը և փրկագործ զօրութեանը, և միանգամայն ամենքս
անոր սեպհական բանաւոր ոչխարներն ենք, և այն խակ է
ամենուս վրայ ամենակալում և ամենիշխան հովիւ, և
ամենուս յոյսը մէկ է հաստատուած աստուածայնին պար-
գեւներուն վրայ, որով կանչուած ենք յարդիւրութիւն
Հօր Աստուծոյ ի ժառանգութիւն յաւիտենական կեանց
և երջանիկ վաստաց ալքայութեան երկինց, ուրեմն մէկ է
ակնկրնիս Յիսուս Քրիստոս, որ իրեն փրկագործու-
թեան իւրաքանչիւրովը ամենքս ստացած է իրեն սեպհական ժո-
ղովուրդ, և ամենքս անոր սրբեցուցած Հնմանիա և կա-
տարեալ մի և նոյն հաւատքը պիտի ունենանք, որ նա
ինքն է առաջին հիմնական և նախկին հաստատիչ և պար-
գեւիչ մերոյս ուղղափառ և կատարեալ հաւատոյ ճշմար-
տութեանը։ Եբէր. ԺԲ. 2։ Եւս և ամենքս ունինք անոր
հաստատած հոգեւոր և խորհրդաւոր ծնունդը սրբարար
և հոգևոսրդ մկրտութեան, ,,Մի մարմին և մի հոգի,
,,որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ. մի է
,,տէր, մի հաւատք, մի մկրտութիւն,, Եփես. Դ. 4-5-6։
Ա.յ պատճառներով չէ՞ որ ամեն զանազան այլայլութե-
քրիստոնեայ ազգերը հոգեւոր խորհրդածութեան մէջ
միաբան միասիրտ և համակամ ըլլալու համար, սրբազան

առաքեալներուն ժողովքը առնուն միանգամայն այս առաջնամեայ եւ գերամեծար անունը առնելն, կոչելով Երկնառանձայ։ «Դու եղիր նոցա դուն ոչխարի ժողովել յերկինս, եւ ուսուցանել ժողովուրդ քաղաքաւ, եւ անուանել նոսա Ս. Նահատակք զաշակերտն քրիստոնեայս»։ Վարք Յ. Ա. 26։ Ինչ պանծալի անուն է այս, երբ որ այս քրիստոսաշնորհ անունով զօրացաւ նկուղցին Երկիրս, մարախրանքը նահատակները այս պաշտելի անունով ալեւացած կ՚ելլային կռապաշտ բռնաւորներուն առեւանը, այս անուան սիրովը վառուած կը հանդիպէին տառապիկ տանջանքներու եւ կը դիմային դառն մահու, այս շնորհապարգեւ եւ երջանկազարդ անունով կը զօրացունէր կը հաստատէր հաւատացեալները պետրոս առաքեալը։ Ա. Պետր. Դ. 15—16։

Ասդ՝ որ է միացեալ այս ամենամեծար երկնաշնորհ քրիստոնէական անուան շքեղութիւնը, որ միայն տալը դրքին մէջ կը տեսնուի, իսկ քրիստոնէից սրտին ու մտքին մէջ ինչու չգիտեմ թագաւորէ եւ չը վառաւորուի, ինչու համար քրիստոնէական անունին սիրոյ, միաբանութեան եւ խաղաղութեան ամենազօրաւոր բարձրաձայնչ շառաւիղները քրիստոնեայ ազգաց մէջը խամրած ու արիւնները դէզ դէզ պակաս եղեւին. մինչ միայն անունովն լսելով տալը դրքէն եւ երբեմն քարոզիչներուն բերնէն կ՚ըմպելնիք եւ երանութիւն կուտանք այն առաջին դարերուն մէջ գտնուած քրիստոնեայներուն, որոնց մէջը քրիստոնէական սէրը, միաբանութիւնը եւ խաղաղութիւնը կը փայլէին, հիմակ անոր հակառակը կը տեսնուի տեղ տեղ, անմիաբանութիւն եւ խռովութիւն. ամենքը Ս. Հաւատոյն կ՚ընդունինք եւ աւետարանական Ճշմարտութիւնը կը ճանչնանք, բայց այս է զարմանք, որ Ս. Հաւատոյն քրիստոնեայ ազգաց մէջ բանակռուութեան հարցմունքները հանելով, հակառակ ոգիովին վարդապետութեան տալը Ս. Հաւատոյն՝ նորահնար սէս սէս վարդապետութիւն հնարելով, ուղղափառ քրիստոնեայները տակաւ եւ աշխարհային մոլմեռաւ ազատութիւնովը խոտանալով,



պարզամիտները որսալու կը հետեւին գայթակղեցուելով եւ բաժանելով իրենց ազգային ուղղափառ եւ անարատ Եկեղեցիեն, իրենց կողմը դարձնելու եւ իրենց ժողովուրդ շահագործելու կ՚աշխատին, ձեն բնաւ աշխատիր այն աւետարանական քրիստոսաճիր սէրը, միաբանութիւնը եւ խաղաղութիւնը սերմանել քրիստոնեայ ազգաց մէջ, այլ քան ամենայնի բանակռուութիւն, տառապիւթիւն, վրդովմունք, բաժանումնք, քրիստոնեայ հայրը քրիստոնեայ որդիին, քրիստոնեայ գերդաստան մը իրեն մեծաւոր ազգային քրիստոնեայ գերդաստանին. այն կ՚ըսէ, քրիստոնէական Ճշմարտութիւնը եւ վերկութիւնը իմ կողմն է. նոյնպէս եւ միւսը, ահա առանձ առջը Աւետարանին Ճշմարտութեան եւ բարեմասնութեան հոգեւոր սերմանելը՝ առապարութեան, բանակռուութեան, խռովութեան եւ վրդովմունն վտանգելու մէջ կ՚նայելով հերձուած անպատուղ կը ճնայ, «Աչս այլն անկաս ՚ի մէջ վշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա»։ Մատ. Ժ. 7։ Այս մեզք մեզ սրտին մերժենք մտքաւ պահենք մեզ միաբը բանակռուութեան, առապարութեան, խռովութեան վշասաբեր չար կիրքերէն, նորահնար եւ օտարաձայն վարդապետութիւններէն եւ ուսուցիչներէն եւ ուսմունքներէն հեռի կենանք, որպէս զի իրրեւ երկիր բարի ընդունինք աւետարանական Ճշմարտութեան եւ քրիստոսական վարդապետութեան սերմանը, հոգեւոր արգասիքներ արգիւնաւորելու եւ պտղաբերելու. ըստ այնմ՝ «Աչս այլն անկաս յերկիր բարի, եւ տայր պտուղ, եր որ հարիւրապատիկ եւ եր որ վաթսնապատիկ, եւ եր որ՝ երեսնապատիկ»։ Մատ. Ժ. 8։

Այս եւ նորահնար վարդապետութիւններն օտարաձայն նոր եւ հակառակ տալը Աւետարանին ըլլալը այս նշանակ յայտնի ըրած են իրենք, որ իրենց մէջ իրենց հնագոյն վարդապետութիւնը մէկ տեղ կայանք չեն տուած, այլ միմեանց հակառակ մէկ մէկի տարբեր, իրենք իրենց մէջը բաղմատեսակ եղած են. տասնկ օտարաձայն վարդապետութիւնէ միտքնին ապատ պահելու համար գրած է Պօղոս առաքեալը։ «Յառնելոն պէսպէս եւ օտարաձայնս

,, մի դանդաղէք ,, ԵՐԷ. ԺԸ. 9. Եւ այս խօսքէն յառաջ
ալ մեր միտքը անանկ օտարաձայն և պետպէտ գայթակ-
ղեցուցիչ ուսմունքներէ վարդապետութիւններէ ազատ և
անարատ պահելու միջոցը և կիրքը սրտիցս մեղմ նոյն
առաքեալը խրատեցավ : ,, Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք
,, խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ , հայեցեալք ի կէր-
,, ցից նոցա , նմանիմք եկեղեցւոյ հաւատոյն ,, ԵԲՐ.
ԺԳ. 7. Ի՛նչ ըսել է, բնաւ միաբերնիւք մի հեռացունիք
ձեր հոգեւոր առաջնորդներէն, որոնք որ ձեզի քարո-
զեցին Աստուծոյ աւետարանական Ճշմարտութիւնը , և
ձեզի հաւատոյ առաջնորդ եղան և հաւատոյ լուսով լու-
սաւորեցին ձեր միտքը , անոնց առաքելութիւնը և հո-
գեւոր երախայքը մի մոռնաք , մանաւանդ նայեցէք , որ
անոնց ձեզի քարոզած հաւատքին Ճշմարտութիւնը ան-
խախան պահէք , ասիկ դարձեալ օտարաձայն վարդապե-
տութեան ախանջասրը չըլլաք ընաւ :

Պօղոս սրբազան Պաղեստին այս հոգեշահ խրատներն կը
յորդորեր նաև Տիմոթէոսի միշտ մեր սրբազան հայ-
րապետներս չհեշտանք և անոնց մեզի քարոզած հաւատոյ
Ճշմարտութեան լուսաշող ջահերն դարձ չնենք լա-
լելու , ասիկ օտարաձայն վարդապետութեան չհետեւե-
լու , որպէս զի չըլլայ թէ ապերախտութեան չար անունը
ժառանգած ըլլանք , և Աստուծոյ սրտմտութեան
պարտաւոր գտնուինք . ասոր համար է , որ մեր Հայոց
ուղղափառ առաքելական , մեր քրիստոնէական հաւա-
տոյ առաջնորդ՝ և աւետարանական Ճշմարտութեան քա-
րոզող՝ բազմերախտ մեծ Հայրապետն մեր առաքեալ Գրի-
գոր լուսաւորչին յիշատակելով չմոռնալ անոր հոգեւոր
երախտիքը , որ առաքեալներէն ետքը մեզի ամենամեծ
բարերարն եղաւ , մեզ ամբողջ ազգովս քրիստոնէական
հաւատոյ լոյսը , առաքելական Ճշմարիտ վարդապետու-
պարգեւները և աւետարանական սրբազան վարդապետու-
թիւնը , որով կոչեցաք և անուանեցաք սրտիկ լուսոյ ,
եկեղեցի Քրիստոսի : Ո՛հ այս երախտագիտութեան
յայտնի կ՚ընենք , ոչ միայն Հոր Աստուծոյ ըսա՛ ընդ



առաջ Հոգւոյն Ընծայելը՝ և Յիսուսի Քրիստոսի կամքը
անոր հաւատաւոր ուղղափառ եկեղեցիին երբէք չջաժ-
նուելով անձամբ և սրտիւ , և անոր քարոզած հաւատոյ
Ճշմարտութիւնը , սրբազան և ուղղափառ վարդապետու-
թիւնները և առաքելական վարդապետութեան
նները , խորհրդաւոր և վայելուչ ծէսերը ու արարողու-
թիւնները , իբրեւ հաւատարիմ առանդապահ ամենայն
զգուշութեամբ պահած ենք ու կը պահենք ընորհիւն Աս-
տուծոյ , այլ և կը յիշատակենք անոր արժանն և պանծալի
հոգեւոր հովուապետական մեծահռչակ անունը , հրաշալի
բարեմասնական հոգեւոր արդիւնքները , ոչ թէ միայն սրտիւ
և մտօք այլ և եկեղեցական երգով վերապատմելով .
ըստ այնմ՝ ,, Աստ զվանականն Գրիգորիս՝ի խառնել
,, նատեալսդ , զՎրէժսրիսա առաքն Հայրապետին , եկայք
,, վերապատմեսցաք : Աստ զանապատական Հոգեւոյն պար-
,, գեւս բաշխող սրբոյ Կաղոտնոյ , յորդիս լուսոյ նոմա-
,, ծնեալք եկայք վերապատմեսցաք : Աստ զաստա-
,, ծային բանին պատուոյ՝ի Հայաստան աշխարհ՝ աշա-
,, կերտաւոր նմա մանկունք , եկայք վերապատմեսցուք ,,
՝ի Շարական :

Աստ՝ թէ որ կշռադատէք բազմարդիւն Հայրապետին
մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչի՝ մեր վրայ ունեցած
հոգեւոր երախտիքը , բազմաեռակ պիտի գտնուիք . ապա
ուրնին մենք ալ անոր երախտագիտա ընծայութիւնը
կը պարտաւորուինք շատ ու շատ , ,, Մեռանի՝ որպէս շատ
,, ոսկա , շատ խնդրեսցի՝ի նմանէ ,, Գ Ե՛ԼՔ. ԺԲ. 48 :

Աստ երախտագիտութիւնս Հայոյն ըսած ենք և կը-
նենք ամենակարող ջօրութեամբ և ընորհիւն Յիսուսի
Քրիստոսի , որ սուրբ Լուսաւորչին քարոզութեամբը հա-
ւատաւոր ուղղափառ Եկեղեցիին սրուշած ու զաս-
ուած ենք գայթակղեցուցիչ խօսքերէ այլասիրել կամ
վրդովիլ և օտարաձայն բանախոսութենէ գրգռուիլ
և հանդուրժել , ասոնք ինչպէս կրնաք դիտել առնել
և մերժել , և ապահովաբար արձակախոսութեան ոգւոյ
մոլորիլ , բնաւ մեկ կողմէ մը չենք կարող մեր հաւատոյն

միաքը թեւլագրել ու հրապուրել որ այս մեր աղօթից եկեղեցական ամբողջութենեն և միութենեն յիմարաբար և ապերախտութեամբ բաժնուինք և սրսըխլինք։ Այսու ըղ Դաղատացոց եկեղեցւոյն ժողովրդոցը պէս ծանծաղամիտ դիւրախաբ չենք, որ վսիսխսիսիք և յարիսիք այսօր այս կողմը, վաղը այն կողմը, որոց վասյ մեծապէս զարմանալով կ'ըսէը Պօղոս առաքեալը։ ,,Օ արհանամ ղն այդ,, պէս վաղվաղակի վսիսխսիսիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ,, ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան ,, Գաղ. Ա. 6։ Եւ Կարնեթացւոց եկեղեցւոյն ալ կը գրէ որ բնաւ վսիսխսիսիլա չըլլան իրենց հոգեւոր և անձնական պաշտօնատարութեան մէջը անգամ։ ,, Ներաքանչիւր որ յոր կոչեցաւ եղբայրք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ։ Ա. Կոր. Է. 24։ Եւսոլ երանաստէտ և հաւատարիմ կը պտնուինք մեր լուսաւորչին բազմերախտ հայրապետին սրբոյն Գրիգորի, որ այն աստուածատուր ձրիատուր պարգեւը քրիստոնէական հաւատոյ անվախճան գանձը որ մեզ աւանդեց քարոզելով։ ,,Գանձ անկապուտ են հաւատք,, ,, որք զգաստան՝ ի մեզ ամբարեն ,,։ ի Յաճախ. Շաբ. ԺԱ. Այս աստուածատուրգեւ հաւատոյ գանձը անկորստ և անպակասելի պահելինք այնպան հաստատուններնով հարատեւ հաւատքներն կրնալով քրիստոնէութեան շքեղ անուանը կրնալ, եւս և անսխալական հայրենիքներնուս գոյքին բռնատիրներեն, եւս և անսխալական հայրենիքներնուս գոյքին ըլլալով մարմնաւոր հարստութենեն մերկացած, ամեն կերպով ու ամեն կողմանէ վիշաներ նեղութիւններ, ըստ Պաւղոսի։ ,, Ա վիշաս՝ ի գետոց, վիշաս ,, յաւազակաց, վիշաս յազգէ, վիշաս՝ ի հեթանոսաց, ,, վիշաս՝ ի քաղաքի, վիշաս յանապատի, վիշաս՝ ի ծովու, ,, վիշաս՝ ի սուտ եղբարց ,,։ Ա. Կոր. ԺԱ. 26։

Այսպ այս բազմաեռակ հալածութիւններուն և վիշտերուն մէջ առաւել գովութեան արժանի են Հայոց Եկեղեցւոյ հարազատ և հաւատարիմ անդամները, որոնք ոչ միայն անպակաս և անկորստ պահեցին այն աստուածատուրգեւ հաւատոյ գանձը, այլ և աստուածահաճոյ ջերմեռանդութեամբ եւ առաքինական բարեմասնութեամբ բազմապատիկ շահեցին։ Որդ ըստ աւետարանական առակին եթէ այն ծառայ՝ որ իր տէրոջը լսելն յանձնած քանքարին (տաւկին) կրկնապատիկը շահելով վաստակեցաւ, ինչպէս տէրը կը վճռէ։ ,,Ընդունիր ,, ծառայ բարի և հաւատարիմ ,,։ Մտ. ԻԵ. 23։

Այսպ ուրեմն մեր Հայոց Եկեղեցւոյ պիտի և հաւատարիմ հարազատ որդիքը խորհրդաւոր բարեպաշտութենով և առաքինական բարեմասնութենով շահ ու վաստակ ունենալու համեմատ առատաձեռնարդեւ հաւատոյ անկապուտ գանձին, այսօրուան օրս պիտի Յիսուսի Քրիստոսի են, և հաւատարիմ Եկեղեցւոյն բարի քրիստոնեայ։ Ուրեմն ըստ երանելոյն Պօղոսի առաքելոյն, ոչ մարմնաւոր ձեռք հարստութեամբ և փառք և բնական գիտութեամբ ունելի պարծիլ, այլ քրիստոսական և սուրբ ուղղափառ կեդրոնի հաւատով։ ,,Պարծիմք ի Քրիստոս Յիսուս և ոչ ի մարմին պանծացեալ ,,իմք,,։ Փիլիպ. Գ. 3։

Այսպէն շատ ու շատ առաւել արժան է քրիստոնեին իրաւամբ պարծենալ քրիստոսական հաւատոյ ճշմարտութեամբը, որուն բազմաեռակ սքանչելի և լոմանալի նեղութիւնները դիմանալով և խոստովանելով արժան և հարկ է միշտ յիշել Պետրոս առաքելոյն այս քարոզած իրատը։ ,,Արդարև լինիջիք՝ որ այժմ սակաւիկ ինչ ,, ըստ պատշաճի երացդ տրտմեալ եք ի պիսպիս փորձութիւնս, զի հանդիպս ձերոյ հաւատոյն առաւել քան ,, զսակի կորստական պատուական է, որ հրով փորձեալ՝ ,, գտանի ի գովեստիւն և ի փառս ,,։ Ա. Պետ. Ա. 6-7։

Այս առաքելոյն խօսքերուն մէջ յայտնի կ'երեւին քրիստոնեական հաւատոյ սքանչելի ներգործութիւնները, որ ջերմեռանդ և ուղղափառ հաւատացեալը հոգւով պիտի զգայ այն ամենը։ Նախ ուրախութիւն մխիթարութիւն մը աշխարհային տրտմութիւններու և զանազան փորձութիւններու մէջ, վասն զի քրիստոնէական ճշմարիտ և ուղիղ հաւատքին զօրութիւնը սրտին մէջ հաս-

առաւել պահով հաւատացեալը չգիտէ յաւտահատ աշ-
խարհի ձախորդութեան և տրտմութեան դիպուածներու
և զանազան փորձութիւններու հանդիպած ժամանակը,
այլ պիտի ամենուն յայտնի հաւատով համբերատար և
երկայնամիտ ըլլալով։ ,,Օ՛ն ամենայն որ Աստուծոյ
,,ծնեալ է յաղթէ աշխարհի, և այս է յաղթութիւնն
,,որ յաղթէ աշխարհի հաւատքն մեր։ Եւ ո՞վ կայ որ
,,յաղթէ աշխարհի, եթէ ոչ որ հաւատայցէ՝ եթէ
,,Յիսուս է որդի Աստուծոյ։,, Ա. Կաթո-ղ. Յհ. Ե. 5-6։
Եւս և հոգեւոր մեծամեծ և անկողոպտելի հարստու-
թիւն է և ամենամեծ փառքաւորութիւն բարեպաշտ քրիս-
տոնէից ուղղափառ հաւատքը, որ աստուածային յայտնու-
նական և երանուհետ փառացը հաղորդ կ՚ընէ մեր հոգին.
վասն որոյ ըսաւ առաքեալն Պետրոս։ ,,Ուրուեք քան
,,զսակի կորստական պատուականն է,,։ Ա. Պետ. Ա. 7։
Այսոն զի այս ամենայն աշխարհի մեծութիւնը և հարըս-
տութիւնը անցաւոր է, և ունայնութիւն, իսկ աստուա-
ծայինն յաւիտենական է, և ճշմարտութիւն։ ,,Օ՛ն մեծ է
,,որ՛ն ձեզ է քան զայն որ յաշխարհի է,,։ Ա. Յհ. Դ. 4։
Աստուծոյ մարդասիրութիւնը կը կամի որ այս իրին ան-
ճառ փառաց մեծութիւնովը փառաւորիմք։ Մտթ. ԻԲ.
21։ Ա. Կորնթ. Ը. 9։ Ա. յայտ անբերելի լսմնալը աստուա-
ծային փառաց ժառանգութեան շքեղութիւնը, երկնաւոր
և անապատում հարստութեան առաւելութիւնը և զո-
րութիւնը հաւատոյ լուսով պիտի ճանչնանք, և այս աստ-
ուածային հաւատոյ պարգեւն յայսը պիտի առաջնորդէ
մեզ սրժանապէս ժառանգելու երկնից արքայութեան
այն հանդերձեալ անճառելի փառքը. և այս անցաւոր
կենացը մէջ ալ պիտի ճանչցուինն մեր մտացը այն ամե-
նայնական երանութեան զօրութիւնները ու վայելչա-
թիւնները, որով յայտերնիս պիտի աներկբայ հաստա-
տուի, և սէրերնիս մշտնջենաւորապէս զօրանայ և բո-
րբոքի. ասոր համար Պօղոս առաքեալը ալօթիւք կը խընդ-
րէր, որ Հայր Աստուած սուրբ Հոգիով նեղոտրձէ հաւա-
տացեալներուն մտացը մէջ ուղղափառ քրիստոնէական



հաւատոյ տնտեսութ լոյսը, որ կատարեալ գիտութիւն և
ծանօթութիւն ունենան ամենքը աստուածային հանդեր-
ձեալ փառաց վրայ, և միշտ հաւատոյ լուսով գիտուն
ու խնամուտ ըլլան հոգւով. ըստ այնմ։ ,,Ես դադա-
,,րիմ՛ի գոհանալոյ վասն ձեր, յիշել զձեզ յաղթութ,
,,զի Աստուած տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հայրն
,,փառաց՝ տացէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնու-
,,թեան գիտութեամբն նորա. լուսաւոր առնել զաչս
,,որտից, առ՛ի գիտենալ մեզ՝ զի՞նչ է յոյս կոչմանն նորա,
,,և զի՞նչ մեծութիւն փառաց ժառանգութեանն նորա՛ի
,,սուրբս, և զի՞նչ է առաւելութիւն մեծութեան զօրութե
,,նորա՛ի մեզ հաւատացեալս։,, Եփես. Ա. 16-17-18-19։

Այսպէս այս ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ, գիտու-
թեան և իմաստութեան ամենապայծառ լոյսը չմնցողը,
և աստղ մշտ լուսաւորուած չեղողը արդէն խաւարի մէջ
է, և չէ կարող աներեսաբար աստուածային աներեւոյթ զօ-
րութիւնները, շնորհաց ներգործութիւնները, հանդեր-
ձեալ փառաց վայելչութիւնը, և բնաւ չունենալով հաս-
տատ ակնկալութիւն և աներկբայ յոյս ժառանգելու այս
ամենը, բնաւ չի գտնափարթ անանձնութեան միտքին մէջը
հաւատոյ ճշմարտութեան ստորագրական ահռելիութիւնը, որ
տուած է Պօղոս առաքեալը։ ,,Օ՛ի՞նչ են հաւատք,
,,եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն և յանդի-
,,մանութիւն որոց ոչն երեւին,,։ Եբր. Ժ.Ա. 1։ Իսկ
հաւատոյ լոյսը երկնային իմաստութիւնը և Հոգւոյն սրբոյ
շնորհաց գիտութիւնը ունեցողները, ստուգ գիրքերուն
առաջնորդութիւնովը ճանչցած եղած կ՚ըլլան աստուածա-
յին բարեբար կամացը և հոգեւոր պարգեւներուն, հոգւոյ
փրկութեան և փառաւորութեան աստուածային զանա-
զան խորհուրդներուն և անօրինութեանցը։ Ասոր համար
վարդապետաց մեզի մեծ հայրապետն մեր և լուսաւորիչն
հոգւոց մերոց սուրբն Գրիգոր, ,,Ճշմարտութիւն հա-
,,ւատոյ լոյս է աչացն մտացն շարժմանց՝ խորհրդոյն յի-
,,շատակաց, զդեցեալ զլոյսն գիտութեան և իմաստու-
,,թեան շնորհաց սուրբ Հոգւոյն, որ զառաջնորդական

,, ղերան լուսաւորէ, և գրովք՝ որբովք յանդիման կացու-
,, ցանէ զաներեւոյթսն, իբրեւ ՚ի աեսիլ սրեզականն
,, լոյս ,, ՚ի Յոճաք. Ա՞ա. Դ։

Աբեմն երանելի է հաւատոյ լուսով պայծառացեալ մտաց աչքը առաւել քան զայնոսիկ, որոնց մէջքը աշխարհային աեսակ աեսակ դիտութիւններով զանազան լեզուաց ճանաչմ ըլլալով՝ զարդարուած են, բայց անդէտ են և չեն հետեւիր հաւատոյ Աչմարտութեան աստուածային գիտութեան Աչմարիտ լուսով լուսաւորելու։ Խարեռը խօսեր է Յակեբերան։ ,, Օ՜ի՜նչ օգուտ է մարդկային
,, բազմատեսակ հանճարներով դիտութիւններով զար-
,, դարուիլ մարք, և աշխարհի մէջ պայծառ անուն ունե-
,, նալ, և մոլորեալ մոլի վարքով անդառնը չար կրնաք
,, հոգեկորոյս խաւարի մէջ հոգւով խարխափիլ ,, ՚ի Ա՞ա-
Ա՞ա։ Ի՞նչ կը նմանին դիտնի բարեմիտ ընթերցող. մարդ մը թագաւորական հարստութիւն ունենայ աշխարհի մէջ. երեւելի և նախանձելի փառքերու և պատիւներու տէր ըլլայ, մեծամեծ անուանի գերդաստան ունեցած ըլլայ, հարստութեան ու վաստաց անուները հռչակուած ըլլայ բոլոր աշխարհի մէջ, բայց անձը հիւծական հատնդութեամբ ախտացեալ ըլլայ, որ անով օրէ օր կենսական զօրութիւնը կըսկսի հաշիլ ու մաշիլ. վատիլ ու վատթարիլ. ի՞նչ օգուտ այն ունեցած աշխարհային մարմնաւոր հարստութիւններն ու փառքերն, աշխարհալոր հմայքներն և վաստաստութիւնէն իրեն նեղքին ունեցած ախտաստութիւնը։ ,, Օ՜ի՜նչ օգտիցէ մարդ՝ թէ զաշխարհս ամե-
,, նայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. կամ ի՞նչ
,, տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ ,, Ա՞ա. Ժ. Զ. 26։
Օ՜ի՜նչ օգուտ է արտաքին գիտութիւններով պայծառանալ, մոլի ու մոլեկան կիրքերով խաւարանալ։ Պատկէն բարի ու գերազոյն օգուտ է հոգւոյ բարեպաշտ քրիստոնէից, որ չերմեռանդ սրտով, և առաքինական սիրով կը ձգտին հաւատոյ Աչմարտութիւնը, իսկ գիտնոյն չար է և վերատակար անոնց հոգւոյը, որոնք որ վերջէն սիրով կը հեռուին միայն դանձելու և ստա-



